

- քափդար** (պրսկ. کفدار kafdar) - փրփրում, պղպջակով, փրփրոտ:
- քաֆ** (պրսկ. کاف kâf) - ճեղքուածք, ճեղքով մեծ աղամանդ:
- քեշ** - Արևմտեան Բենգալիայի Բիրբրում շրջանում պատրաստուող գործուածք:
- քեչրի/քեչրի** (թամիլ. कीचड़ kīchar) - պղտոր, սղմոտ:
- քիսայ** (պրսկ. کيسه kīsa) - պայուսակ, որի մէջ կա՛մ դրամ էիմ պահում, կա՛մ մամակներ. պարկ, տոպրակ:
- քնար** (պրսկ. کنار kanar; kenar) - կողք, կողքի վրայ, ծայրին:
- քշտայ** (պրսկ. کشت kusht) - կողք, ծայր:

- քուլուղ** (պրսկ. کلوخ kulūkh) - այստեղ հաւանաբար՝ բութ կամ աղոտ:
- քուռայ** (հնդկ. कोरा korā) - չօգտագործուած, չլուացուած:
- օլիվէթ** (պրսկ. اولويت owlaviyyat) - առաջնահերթութիւն, մախապատուութիւն, գերազանցութիւն:
- օրթայ** (թրք. اورتا orta) - մէջտեղ:
- ֆարդ** (արաբ. فارد fard) - թերթ (թղթի):
- ֆիրուզայ** (պրսկ. پروز pīroza) - փիրուզ:
- ֆոանկփասան** - Եվրոպայում ընդունուած, երոպական ձեռով/ոճով Եւրոպայում գովաբանուած
- Ֆումին** – հաւանաբար՝ Ֆուման, քաղաք Իրանում:

**Կ.ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԻՔՆԵՐ
ԹՈՎՄԱ ՎՐԴ. ԲԵՐԻԱՑԻ (1603-1658) ԵՒ
ԴԱԻԻԹ ԲԵՐԻԱՑԻ (°-1679)**

Սերուծան Կարապետեան

Ուսումնասիրողները վաղուց ի վեր արձանագրել են միջնադարեան Եւրոպայում տարբեր նպատակներով յայտնուած Հայ Հոգեւորականների առկայութիւնն ու գործունէութիւնը¹:

Ժէ.-ԺԸ. դարերի աղբիւրներում եւս ակնյայտօրէն նկատելի է զգալի թուով Հայ Հոգեւորականների գործունէ շարժունակութիւն Եւրոպական տարածաշրջանում²: Ինչպես նախնական անձնական դիտարկումները, այնպէս էլ առանձին անձանց վերաբերեալ եղած լուրջ գիտական մենագրութիւնները թոյլ են տալիս հետեւեալ կերպ խմբաւորել «Թափառող» Հայ Հոգեւորականներին.

- Նախիջեանի Հայ կաթողիկէ թեմի անդամներ (Հռոմում հաւատոյ դաւանութիւն տալու եւ ապա սեփական դաւանութեան պաշտօնէութեան անցնելու համար, միաժամանակ նաեւ դրամահաւաքութեան նպատակով շրջող Հոգեւորականներ, որոնց թւում նաեւ Ազարիա Յրիզան³, Օգոստինոս Բաջենց⁴, Անտոն Ապրակունցի, Յակոբ Յիսուսի⁵, Գրիգոր Ծործորեցի, Թոմաս Իսաւերդենց⁶, եւն)⁷:

1 Հարցի մասին ոչ լիակատար մատենագիտութիւնը տե՛ս L. B. Zekiyan, La colonie armene del Medio Evo in Italia e le relazioni culturali italo-armene (Materiale per la storia degli Armeni in Italia).- San Lazzaro-Venezia, 1978, pp. 803-946. Gérard Dédéyan, Les Arméniens en-Occident, fin du Xe siècle - début du XIe.- Occident et Orient au Xe siècle. Actes des congrès de la Société des historiens médiévistes de l'enseignement supérieur public 9^e congrès, Dijon, 1978, pp. 123-139; «Roma-Armenia» (sous la direction de Claude Mutafian, Roma, 1999; Pierre Maraval, Armand Tchouhadjian, Maxime K. Yevadian, Pèlerins d'Arménie Saints d'Occident: Evêques et prédicateurs venus évangéliser l'Europe aux IIIe-Ve et Xe-XIe siècles, 2011; Georges K. Khayiguan & Maxime K. Yevadian, Saint Servatius d'Arménie, premier évêque de Maastricht, 2012.

2 Տե՛ս Հ. Գրիգորիս Վրդ. Գալէմբերեան, Կենսագրութիւններ երկու հայ պատրիարքներու եւ տասն եպիսկոպոսներու եւ ժամանակին հայ կաթողիկէայք (Կենսագրութիւններ. Այս 1554-1822), Վիեննա, 1915 (Ազգային մատենադարան, ՀԸ); Կարապետ Եպս. Ամատունի, ԺԷ. դարու երեւելի վարդապետներ, Վենետիկ-Ս. Ղազար, 1989:

3 Մահացաւ եւ թաղուեց Հռոմում (տապանագիրը տե՛ս Մերուծան Կարապետեան, Հոմի հայ գաղթօջախի պատմութիւնը,- «Պատմա-քանա-սիրական հանդէս», 1998, № 1-2, էջ 174-176:

4 Տե՛ս Ambrosius Eszer, Ógostinos Bajenc O. P. als Oberhirte von Naxijewan,- "Archivum fratrum praedicatorum", vol. XLVII, Roma, 1977, SS. 183-246; Հ. Սահակ Ծեմճեմեան, Նախիջեանի հայոց վարժարանը եւ Հոմը, Վենետիկ-Ս. Ղազար, 2000, էջ 66-85; Մերուծան Կարապետեան, Նորայայտ փաստաթղթեր Նախիջեանի ԺԷ դարի առաջին կեսի պատմութեան վերաբերեալ. Օգոստինոս Բաջենց (1584-1653),- "Armenian History Materials in the Archives of Central Europe", Yerevan, 2001, էջ 47-65: Նաեւ Guillaume Aral, Les arméniens catholiques. Étude historique, juridique et institutionnelle XVIIe-XIXe siècle, Les Éditions de Nicéphore, 2017.

5 Տե՛ս Longo Carlo, Fr. Giacomo di Gesù OP (1590ca-1969), provinciale d'Armenia,- "Archivum Fratrum Praedicatorum", 1999, 69, pp. 225-245; Հ. Սահակ Ծեմճեմեան, Նախիջեանի հայոց վարժարանը եւ Հոմը, Վենետիկ-Ս. Ղազար, 2000, էջ 177-203:

6 Տե՛ս Longo Carlo, Isavertenc (Toumas),- Dictionnaire d'histoire et de géographie ecclésiastiques, t. XXVI, pp. 136-137.

7 Տե՛ս Հ. Սահակ Ծեմճեմեան, Նախիջեանի հայոց վարժարանը եւ Հոմը, Վենետիկ-Ս. Ղազար, 2000:

- Եւրոպական կրթական, գրահրատարակչական նորագոյն հնարաւորութիւնները իւրացնելու եւ գրատպագրութեան, տպարան հիմնելու նպատակներով Եւրոպա անցած կրօնաւորներ (Յովհաննէս Անկիւրիացի (Մուրինո), Մատթէոս Վրդ. Ծարեցի, Ոսկան Վրդ. Երեւանցի, Յովհաննէս Վրդ. Զուղայեցի, Վանանդեցիներ եւն):

- Ուխտաւորական ու նուիրակական ժողովարարութեան նպատակներով Եւրոպայի հայկական թեմերում յայտնուած հայ հոգեւորականներ (Յովհաննէս Թուրունջի, Խաչատուր Գաղատացի⁸, եւն):

- Արեւելքում կաթողիկ միսիոներների աջակցութեամբ տարբեր պատրուակներով (հոգեւոր ծառայութիւն, կրթութիւն եւն) Եւրոպա տեղափոխուած եւ կաթողիկէ եկեղեցում հոգեւոր ծառայութեան լծուած անհատ հայ երիտասարդներ (Զաքարիա Աղամ¹⁰, Յակոբ Գրիգորեանց¹¹, Յովհաննէս Հոլով, Վարդան Յունանեան¹², եւն):

- Սեփական վանական հաստատութիւններ հիմնելու նպատակով (Մխիթարեաններ (Վենետիկ, Տրիեստ, Վիեննա),

Պոլսից այլ հոգեւորականներ՝ Սարգիս եպիսկ. Սարաֆեան¹³ եւն):

- Դիւանագիտական կամ առեւտրական նպատակներով (Յովհաննէս Թուրունջի, Առաքել եպիսկ. Շոռոթեցի¹⁴ եւն):

- Սեփական հայրենիքում իշխող մահմեդական իշխանութիւնների հետ առաջացած խնդիրների պատճառով (Պոլսի հայոց պատրիարք Յովհաննէս Խուլ¹⁵, Սսի Ազարիա կաթողիկոս,¹⁶ եւն):

- Արկածախնդիրներ ու բախտախնդիրներ (Առաքել եպիսկոպոս Երեւանցի¹⁷ եւն):

Ստորեւ փորձ ենք անում Հաւատասփիւռի ժողովի եւ Վենետիկի պետական դիւաններում ամբարուած փաստաթղթերի օգնութեամբ ուրուագծել Կ.Պոլսի հայոց պատրիարքութեան աթոռը կարճատեւ կատարած երկու հայ հոգեւորականների՝ Թովմա եւ Դաւիթ Բերիացիների կերպարն ու կենսագործունէութիւնը վերոնշեալ համատեքստում:

8 Մանրամասն տե՛ս Կարապետ Ամատունու (Ոսկան Վրդ. Երեւանցի եւ իր ժամանակը, Վենետիկ-Ս. Ղազար, 1975) եւ Հ. Սահակ Ծեմճեմեանի (Հայ տպագրութիւնը եւ Հոմ (Ժէ. դար), Վենետիկ-Ս. Ղազար, 1989) մեծագործումները:
 9 Տե՛ս Մերութեան Կարապետեան, Սսի Խաչատուր կաթողիկոս Գաղատացի- «Բագմավէպ», (յանձնուած է տպագրութեան):
 10 Տե՛ս Մերութեան Կարապետեան, Զաքարիա Աղամ (1611-1688),- «Բագմավէպ» (յանձնուած է տպագրութեան):
 11 Տե՛ս Մերութեան Կարապետեան, Յակոբ Գրիգորեանց (1639-),- «Հայաստանը եւ արեւելաքրիստոնէական քաղաքակրթութիւնը. Գ», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատարակչութիւն, 2018, էջ 91-113:
 12 Տե՛ս Կարապետ Եսայ. Ամատունի, Ժէ. դարու երեւելի վարդապետներ, Վենետիկ-Ս. Ղազար, 1989, էջ 86-89; Gregorio Petrowitz. L'Unione degli Armeni di Polonia con la Santa Sede (1626-1686), Roma, 1950 (Orientalia christiana analecta 135):

13 Տե՛ս Հ. Գրիգորիս Գալէմբարեան, Կենսագրութիւն Սարգիս արք.ի Սարաֆեան եւ ժամանակին հայ կաթողիկէայք, Վիեննա, 1908 (Ազգային մատենադարան ԾԵ.)
 14 Տե՛ս Մերութեան Կարապետեան, Առաքել արքեպիսկոպոս Երեւանցի եւ Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցի,- «Հանդէս ամսօրեայ», 2018, էջ 199-274:
 15 Տե՛ս Մերութեան Կարապետեան, Հոմի հայ գաղթօջախի պատմութիւնից,- «Պատմա-բանասիրական հանդէս», 1998, № 1-2, էջ 173-174:
 16 Աղանայի փառալուստի կողմից մինչեւ իսկ ֆիզիկական բռնութեան ենթարկուած այս բարձրաստիճան հոգեւորականը ստիպուած էր լքել երկիրը եւ անցնել Արեւմուտք հաստատուելու: Մահացաւ եւ թաղուեց Հոմում (տապանագիրը եւ համաձայն կենսագրութիւնը տե՛ս Կոյն տեղում, էջ 170-173):
 17 Տե՛ս Մերութեան Կարապետեան, Առաքել արքեպիսկոպոս Երեւանցի եւ Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցի,- «Հանդէս ամսօրեայ», 2018, էջ 159-198:

Կ.ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԻ ԹՈՎՄԱ ՎՐԴ. ԲԵՐԻԱՑԻ (1603-1658)

«Շատ երկար եւ հետաքրքրական գրուածներ կան այս տարօրինակ, յանդուգն, խորամանկ եւ թշուառամախ անձին վրայօք Վենետիկոյ դիւանաց մէջ, 1648-57 տարիներու միջոց (պէտք է գտնուի եւ ի դիւանա Հոովմայ). որ կրնան ընծայել մեր պատմութեան մոր պատկեր մի, բայց եւ այլանդակ. եւ Հայ-Վենետաց Գ. Յեղամակի ամենէն մշակատր դիպուածոց մէկն է» (Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, Վենետիկ-Ս. Ղազար, 1896, էջ 491):

Կղեմէս Գալանոսն ու Թովմաս Բերիացին Կ.Պոլսում.

նաեւ տարեկան վճարումները եւ նպաստները, հրաժարուած է նաեւ այդ մտքից:

Ժէ. դարի առաջին քառորդին (1622) Հռոմում հաստատուեց Հաւատասփիւռի ժողովը (De Propaganda Fide), որի գլխաւոր նպատակն էր յանուն եկեղեցիների միութեան Հռոմի եկեղեցու դաւանանքը տարածել աշխարհում: Միսիոներների բազմութիւնն ուղեւորուեց յատկապէս Արեւելք, ուղղելու համար եկեղեցիները, սրբազրելու համար նրանց վարդապետական սխալները:

Այս նպատակով Արեւելքում յայտնուած 30-ամեայ երիտասարդ թէպիսեան քարոզիչ Կղեմէս Գալանոսը¹⁸, թողնելով Վրաստանում Գորիի թէպիսեան առաքելավայրը, մեկնեց Կ. Պոլիս 1641 թ. ապրիլի 12-ին ու մեծ ջանքեր գործադրեց հայերէնի լաւ ուսուցիչ գտնելու համար, որպէսզի կատարելապէս տիրապետի լեզուի հմտութիւններին: Երբ տեսնում է, թէ անկարելի է նման անձ գտնելը, մտքից անցնում է Պրոմալլիի նման անցնել Երեւան, որոշ ժամանակ այնտեղ բնակուել լեզուն սովորելու համար. բայց որովհետեւ միսիոները առանց Հռոմի Հաւատասփիւռի ժողովի բացայայտ հրահանգի չէր կարող ինքնագլուխ անցնել մէկ քաղաքից միւսը, քանի որ այս հրահանգի հետ կապուած էր



Clemente Galano
Insigne Teologo
Nacque in Sorrento nel 1603.
Mori in Leopoli ai 14. Maggio 1658.

Պոլսում բացի հայերէնի ուսուցիչ գտնելու դժուարութիւնից՝ Գալանոսը ապրելատեղիի դժուարութիւն ունէր. քանի որ թէպիսեան միաբանութեան տունը Կ. Պոլսում նոր էր փակուել, վճարով տեղաւորուած է վեղարաւորների վանքում եւ այնտեղ էլ անհրաժեշտ հիւրընկալութիւնը չգտնելով՝ մի պահ փորձում է վերադառնալ Իտալիա, սակայն այն յոյսը, որ պիտի կարողանայ սովորել հայերէն եւ բարբէք անել հայերին՝ ղիմանում է բոլոր նեղութիւններին¹⁹: Վրաստանից Պոլիս հասնե-

18 Համաձայն կենսամատենագիտութիւնը տե՛ս Antonio Francesco Vezzosi, I scrittori de' cherici regolari detti Teatini. Parte prima seconda, Roma, 1780, pp. 375-383:

19 Տե՛ս Կ.Պոլսից Գալանոսի 1641 մայիսի 7-ի ամակը (տե՛ս Archivio della S. Congregazione de Propaganda Fide (այսուհետեւ՝ AP), Scritture

լուց եօթը ամիս յետոյ, Գալանոսը, 1641 թ. դեկտեմբեր 9-ին, գրում է Հաւատաստեալի ընդհանուր թէ պատրաստել է Հայերէն լեզուով Տրամաբանութեան գիրքը եւ շարադրում է Քերականութիւնը, եւ թէ ծրագիր ունի այն ուղարկելու Հռոմ՝ տպել տալու համար²⁰: Յաջորդ ամսին, այն է 1642 թ. յունուար 15-ին Գալանոսը գրելով Հայոց մասին է, ակնարկելով անշուշտ մեր հաւատքն եւ եկեղեցաբանութիւնը, թէ «չեղուած է, ո՛չ չարութեամբ, այլ տգիտութեամբ»: Եւ իսկոյն ակնարկում է այս ուղղութեամբ իր տարած աշխատանքը, այն է՝ Տրամաբանութիւնը շարադրեցի, ներկայիս ակարտում եմ Քերականութիւնը, որ Հայ եկեղեցականների խնդրանքով պիտի ընդօրինակեմ գեղեցիկ գրով եւ բանաստեղծական ճաշակով: Ուզում եմ իմանալ, գրում է Գալանոսը Հաւատաստեալի ժողովի քարտուղարին, կարելի՞ է տպել Հաւատաստեալի տպարանում, որովհետեւ ուզում եմ (գիրքն) ուղարկել աշակերտիս հետ (իմա՝ Յովհաննէս Աբտալը), որ նա հսկի տպագրութեանը. (չնայած) պէտք է ես անձամբ գալի հսկելու, որովհետեւ շատ կարեւոր գործ է»²¹:

Originali riferite nelle Congregazioni Generali (այսուհետև՝ SOCG), vol. 166, f. 215), հմմտ. Antonio Francesco Vezzosi, *I scrittori de' cherici regolari detti Teatini*, p. 377.

²⁰ SOCG, v. 167, f. 167+172:

²¹ SOCG, v. 167, f. 144: Կ. Պոլսում Գալանոսի պատրաստած այս աշխատութիւնը, որ իրաւամբ կարելի է համարել երոպական հայագիտութեան ճիւղերից մէկը, լոյս տեսաւ 1645 թ. հետեւեալ տիտղոսաթերթով՝ «Քերական, եւ տրամաբանական ներածութիւն առ յիմաստասիրութիւնն շահելոյ: Grammaticae, et Logigae institvtiones. Linguae Literalis Armenicae. armenis traditae ad. Clemente Galano, clerico regulari Sacrae Theologiae Professore, et Sanctae Sedis Apostolicae ad Armenos missionario. Addito Vocabulario Armeno-Latino omnium scholasticarum Dictionum. Romae. Ex Typographia Sacrae Congreg. de Propaganda Fide, MDCXLV» (գրքի նկարագրութիւնը տե՛ս Ն. Ա. Ոսկանեան, Ք. Ա. Կորկոտեան, Ա. Մ. Սաւալեան, *Հայ գիրքը 1512-1800 թթ.*, Եր., 1988, էջ 30):

Աւելի արդիւնաւէտ լինելու նպատակով՝ Գալանոսը համարում է, թէ անհրաժեշտօրէն կարեւոր է ամէն կերպ «հայանալ», այն է՝ հետեւել Հայ ծէսին, պատարագին, ժամերգութեանը, ծոմերին, զգեստին, ու այս ուղղութեամբ նամակների տարափ է տեղում Հռոմ, հրաման ու արտոնութիւն խնդրելով. «գրեցի ձեզ յունուարի 15-ին եւ պատասխանի եմ սպասում. հայերը խանդավառ կերպով պնդում են, գրում է Գալանոսը 1642 թ. փետրուար 5-ին, ասելով թէ ինձ ուզում են տեսնել պատրիարագական եկեղեցում, իրենց զաւակներին սովորեցնելու համար, ես չգիտեմ անելիքս, որովհետեւ գնալու դէպքում՝ պէտք է պահեմ իրենց ծէսը եւ ծոմերը, պատարագեմ հայերէն լեզուով»²²: 1642 թ. մարտի 8-ին դեռ հետապնդում է տեղում վարժարան հիմնելու գաղափարը, գրելով Հաւատաստեալի քարտուղարին. «այժմ հետամուտ եմ բնակութիւն ստանալ Ղալաթիայում, դուք էլ կարող եք նպաստել այս գործին՝ գրելով Վենետիկի դեսպանին: Տունը ստանալով՝ ուսման մէջ մեծ օգուտ պիտի տամ հայերին, որովհետեւ ոչ մի միսիոներ չի կարողացել օգտակար լինել այս ուղղութեամբ, նմանապէս այդ սուներ օգտակար պիտի լինի՝ եթէ Հայերը ինձ վճարելու լինեն իրենց միջոց, ինչ-որ այժմ հաւանական չեմ համարում»²³:

Կղեմէս Գալանոսն ի վերջոյ հանգրուանում է Հայոց պատրիարքարանում, իր շուրջը հաւաքելով լատինասէրների մի փոքրիկ խմբակ²⁴: Այսպէս, 1642 թ. մարտին, Յովհաննէս Արքեպիսկոպոս Եղեսացու (յայտնի որպէս Միջագետքի եպիսկոպոս) պնդումով, Յրանսիայի եւ Վենետիկի դեսպանների խորհրդով՝ Գալանոսը վեղարա-

²² SOCG, vol. 167, f. 145

²³ SOCG, vol. 167, f. 146

²⁴ Տե՛ս Մաղաքիա արքեպս. Օրմանեան, *Ազգայատում*, հտ. Բ, Ա. Էջմիածին, 2001, § 1694, էջ 2867-2869: Կ. Պոլսում Գալանոսի հիմնած վարժարանին անդրադառնալու ենք առանձին ուսումնասիրութեամբ:

ւորների վանքից բնակութիւնը փոխադրում է Հայոց պատրիարքարանը, փոխելով նոյն իսկ տարագը, հազնելով Հայ վարդապետների նման, մասնակցելով Հայոց ժամերգութեանն եւ ծէսերին²⁵: Գալանոսը 1642 թ. մարտի 28-ին գրում է, թէ Պատրիարքարանի մէջ «դասաւանդում եմ իմաստասիրութիւն եւ աստուածաբանութիւն, քանի որ տգէտ են այս մարզում: Բոլորը զարմանում են յաջողութեանս համար, որովհետեւ չլսուած բան է: Զարմանում են յատկապէս միսիոներները՝ որոնք յուսահատուած էին հայերից եւ որով չէին նուիրուել նրանց լեզուն սովորելու: Ներկայումս շատ հայերի սովորեցնում եմ քերականութիւնը, այլոց՝ տրամաբանութիւնը»²⁶:

1642 թ. Հռոմում տպուել էր հայերէն եւ լատիններէն լեզուներով 28 էջով մի գրքոյկ. «Դասանութիւն ճշմարիտ եւ ողափստ հաւատոյ վասն առնելոյ եկեղոցն յարեւելից» վերնագրով: Այս գրքոյկից մի օրինակը Հաւատաստեալի ժողովի կողմից ուղարկուել էր Պոլիս, Կղեմէս Գալանոսին, որպէսզի զանազան անձանց ստորագրել տայ: Հռոմում գրքոյկի թարգմանութիւնը կատարել էր հայագիտի ֆրանցիսկեան կրօնաւոր Fr. Francesco Stefano Ragopoviz-ը, որ միաժամանակ հսկել էր նաեւ տպագրութեան վրայ²⁷:

²⁵ Գալանոսն այս լուրը հաղորդում է 1642 թ. մայիսի 14-ի նամակով ու խօսելով ծոմերի մասին գրում է, թէ հետեւում է հայկական ասանդութեանը. «բայց գաղտնի խմում եմ մի քիչ գինի՝ ստամոքսիս համար, որ ինձ ուղարկում է Յովհաննէս Տիարպեթիի արքեպիսկոպոսը» (տե՛ս SOCG, vol. 167, f. 148+157):

²⁶ Տե՛ս SOCG, vol. 167, f. 147

²⁷ Fr. Francesco-ի մասին ունենք հետեւեալ տեղեկութիւնները: Fr. Francesco-ն, Հաւատաստեալի ժողովի կարգադրութեամբ, ամառնաբնակ է 1642 թ. Հռոմում Խորհրդատետրի տպագրութեանը (տե՛ս AP, Fondo Vienna, vol. 22, f. 519; Հմմտ. Acta, vol. 14, f. 288):

Վանեցի Սարգիս եպիսկոպոսը, 1642 թ. օգոստոս 31-ին Հռոմից Լիվոռնոյ հասնելով, իտալերէն լեզուով մի նամակ է գրել Հաւատաստեալի ժողովի

Յովհաննէս Մոլիսոն, Հռոմում եղած շրջանում, Ս. Աթոռում ունեցել է թարգմանի վճարովի պաշտօն, մանաւանդ որ քաջածանօթ էր բացի հայերէնից՝ թուրքե-

քարտուղարին, ուր իտալերէն ստորագրութիւնն է "Giorgio vescovo armeno", մինչդեռ հայերէնը ստորագրութիւնը՝ «Ես Առաւստ Ս[ա]րգի[ս]ս եպ[ի]սկոպոս[ո]ս է: Նամակում Սարգիս եպիսկոպոսը բողոքում է, ասելով թէ Վանից եկել է Հռոմ ու առաջին օրը հանդիպել է Fr. Francesco Armeno-ին, որին էլ խոստովանել է: Fr. Francesco-ն Սարգիս եպիսկոպոսից ստացել է 10 ոսկի, որպէսզի Ուրբանոս Ը. պապի մօտ ունկնդրութիւն յաջողացնի, բայց դրանից յետոյ այլեւ չեն տեսնուել: Սարգիս եպիսկոպոսը Յովհաննէս վրդ. Ջողայեցոյ առաջնորդութեամբ կատարել է հաւատոյ դասանութիւն եւ Անյ վարդապետի հետ մեկնել է Լիվոռնոյ, որպէսզի ծեր տարիքում մեծակ չճանապարհորդի: Հռոմից մեկնելուց առաջ Սարգիս եպիսկոպոսը ցանկացել է հրապարակօրէն ներկայացնել իր բողոքը, սակայն Յովհաննէս վարդապետ Ջողայեցին արգելել է. «այժմ պահանջում եմ դրամ, եւ այդ Fr. Francesco Armeno-ն էլ դուրս վնդուելիք է թէ՛ իր պաշտօնից եւ թէ՛ քաղաքից» (SOCC, vol. 35, f. 455):

Հաւատաստեալի ժողովի 1643 թ. Անյեքեր 6-ի նիստին գեկուցում է լեհահայոց արքեպիսկոպոս Նիկոլ Թորոսովիչի ցանկութիւնը, որ ուզում է իր հետ Լեհաստան տանել Fr. Francesco Armeno-ին. «իբր խոստովանաւայր եւ օգնական, որպէսզի հայերին դարձնի դէպի եկեղեցական միութիւն»: Ժողովը համաձայնում է, բաւական համարելով, որ Fr. Francesco-ի ընդհանրական մեծատրը եւս տայ իր համաձայնութիւնը (Acta, vol. 15, f. 465, n. 26):

1644 թ. ապրիլ 6-ին գրում է Վենետիկից Հաւատաստեալի ժողովի քարտուղարին, նկարագրելով կատարած դժուարին ճամբորդութիւնը: 1644 թ. հոկտեմբեր 9-ին Պօղոս Փիրմալիին գրելով Ապարաներից Հռոմ, իր մեծատրին, իմիջիպաց, խնդրում է տեղեկութիւններ իր աշակերտի՝ Fr. Francesco polacco armeno-ի մասին, որ տեղատրել էր Տասներկու Առաքելոց վանքը, սրանով փաստօրէն տեղեկանում ենք, որ Fr. Francesco-ն Լեհաստանում է, եւ որ աշակերտել է Պօղոս Փիրմալիին (տե՛ս SC Armeni, vol. 1, f. 11-12): Fr. Francesco-ն 1645 թ. մայիս 12-ին տեղեկացնում է Հաւատաստեալի ժողովի քարտուղարին, թէ հասել է Իտալիա եւ տեղատրուել է Ասիզի ֆրանկիսկեանների վանքում. նամակի տակ ստորագրելով՝ «Fr. Francesco Stefano da Ragopoviz, Confessione armenorum et interprete di Sua Santita, Min[or] Con[ventuale]» (տե՛ս SOCC, vol. 43, f. 290):

րէնին, «ուռթենէնների լեզուին», իտալերէնին, լատիններէնին: 1641 թ. յուլիս-օգոստոս ամիսներին, երբ տպագրական նպատակներով Մոլիսոն փոխադրուել էր Վենետիկ, Fr. Francesco անունով հայազգի կրօնաւորը դիմում է ներկայացնում Մոլիսոյի փոխարէն Ս. Աթոռի թարգման դառնալու համար: Իր այս խնդրանքը զեկուցւում է Հաւատասփիւռի ժողովի 1641 թ. սեպտեմբեր 30-ի նիստին, առանց որեւէ որոշում կայացնելու²⁸:

1641 թ. դեկտեմբեր 22-ով թուագրուած մի գրութիւն ունենք, հաւանաբար Հաւատասփիւռի քարտուղար Ինկոլիի կողմից գրուած եւ ուղղուած Հաւատասփիւռի նախագահին, ուր նա շեշտում է Հռոմում հայազգի Fr. Francesco Փրանցիսկեանի ներկայութեան անհրաժեշտութիւնը, իբրեւ պապին եւ Հաւատասփիւռի ժողովին ուղղուած հայերէն լեզուով նամակների թարգմանիչ, մանաւանդ որ գիտի հայերէն եւ թուրքերէն: «Առանց ձեր վսեմութեան հրամանի, գրում է քարտուղարը, պալատի պաշտօնէութիւնը զանում է տալ իրեն այն փոքր վճարը (Չուլիները) որ նախկինում վճարում էր Յովհաննէս Մոլիսոյին՝ իբր երկու լեզուների թարգման, եւ դրա համար որոշել է գնալ Պոլիս...: Ուստի խնդրում է, որ հրահանգէիք որպէսզի սա չմեկնի Հռոմից, ու պալատի պաշտօնէութիւնն էլ վճարի այդ սակաւ վճարը (Չուլիները)»²⁹:

Յաջորդ ժողովական նիստերից մէկում (սրա թուականը, ցաւօք, չկարողացանք ճշտել), կատարուած Ուրբանոս Ը. պապին ներկայութեամբ, զեկուցւում Պոլսի Պատրիարք Կիրակոս վրդ. Երեւանցիի նամակը, գրուած 1641 թ. նոյեմբերի 5-ին: Կատարուած արձանագրութեան վերջում գտնում ենք հետեւեալը. «Հռոմում հայե-

28 St'u Acta, vol. 14, f. 458-459, n. 34:
29 St'u SOCG, vol. 403, f. 228:

րէն գրութիւնների համար ուրիշ թարգման չկայ եթէ ոչ Fr. Francesco հայ Փրանցիսկեանը, որը չկարողանալով ապրել իր վանքի՝ այն է Տասներկու Առաքելոց մենաստանի ամսականով, մտադիր էր Պոլիս գնալ, հոգալու իր ապրուստը եւ հագուստները: Այսպիսով, լաւ կը լինի տալ որոշ ամսական, իրեն այստեղ պահելու համար, որովհետեւ ոչ միայն կարող է ծառայել իբրեւ թարգման, այլ ուսուցանել քրիստոնէական եւ ընդունել (լսել) Հռոմ հասնող հայերի խորհրդական խոստովանութիւնը, որոնցից շատերին արդէն իսկ կաթողիկէ է դարձրել: Օրինակելի վարքով կրօնաւոր է, յաճախում է ժամերգութեանը, իր ընդհանրական մեծաւորը գոհ է իր վարքից: Երկու սկուդ ամսականը բաւական է իր հագուստների համար՝ քանի որ սնունդը վանքից է ստանում: Հայերէն լեզուով լաւ տպել գիտէ եւ նման ենթակայի կարիքը ս. Աթոռը ունի»: Նոյն նիստով որոշում տալ նրան երկու սկուդ³⁰:

Այսպիսով, Գալանոսը ստանալով Հռոմում տպագրուած «Դաւանութիւն ճշմարիտ եւ ուղիւստ հաւատոյ վասն առնելոյ եկեղոցն յարեւելից» գրքոյկը, 1643 թ. փետրուարի 22-ին Կ. Պոլսից գրում է Հաւատասփիւռի նախագահին, անելով իր դիտողութիւնները, թէ գիրքը լցուած է մեծամեծ սխալներով, ինչ որ նախատինք է Ս. Աթոռին եւ խոստանում է սրբագրել եւ ուղարկել Հռոմ, որպէսզի վերատպուի³¹: Նոյն տարում (1643) Գալանոսը անակնկալ կերպով մեկնում է Պոլսից Հռոմ: Պոլսի իր մեծաւորը, P. Giuseppe Giudice-ն, 1643 թ. յուլիսի 26-ին գրում է Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին՝ հաղորդելով տեղի լուրերը, ու նոյն նամակի յետ գրութեան մէջ աւելացնում է. «Հայերէն լեզուով տպուած Հաւատքի դաւանանքին նկատմամբ, որ լաւ չի տպուել, Հ. Գալանոսը

30 St'u SOCG, vol. 180, f. 373:
31 St'u SOCG, vol. 68, f. 315:

Հռոմ հասնելով, Աստուծոյ շնորհքով, դրական դեր պիտի խաղայ»³²:

Կղեմէս Գալանոսը Պոլսում եղած ժամանակ իբր միսիոներ սկսեց ազատորէն գործել, քարոզելով Հայաստանեայց եկեղեցու բեմերից եւ ուսուցանելով փիլիսոփայութիւն եւ աստուածաբանութիւն, իր շուրջը հաւաքելով երիտասարդ աշակերտներ: Նրան հարող աշակերտներից էր նաեւ Թոմաս վրդ. Բերիացին, որ Պոլսի Կիրակոս պատրիարքի աշակերտն էր:

1642 թ. յունիսի կէսին Կիրակոս պատրիարքը վախճանուեց ժանտախտից: Գալանոսը, 1642 թ. յուլիսի 19-ին, գրելով Հաւատասփիւռի կարդինալներին, հաղորդում է Պոլսում հրապարակորէն շրջող հանրային լուրը. որ է պատրիարքական աթոռի թեկնածուների անունները, որոնցից առաջինը՝ Խաչատուր Գաղատացի, երկրորդը՝ Թոմաս Բերիացի (երկուսն էլ իր աշակերտներից, այն է Հռոմի աթոռին հարող) եւ երրորդը՝ Դաւիթ Արեւելցի³³:

Յովհաննէս արքեպիսկոպոս Եղեսացու (յայտնի որպէս Միջագետքի եպիսկոպոս) ջանքերով Խաչատուրը գրաւում է պատրիարքական աթոռը եւ երբ Հռոմից հասնում է ողջոյնի նամակը եւ առաջարկ,

32 St'u SOCG, vol. 168, f. 306: Մատենագրական ցանկերից դատելով՝ Գալանոսի սրբագրութեամբ Հաւատոյ դաւանութիւնն չի տպագրուած: Տարիներ անց, այն է 1658-ին, երբ Հռոմի մէջ քննարկուում էր Ջաքարիա Աղամիս եւ Կղեմէս Գալանոսին պահել իբր թարգման Հաւատասփիւռի ժողովի համար, Առնոն ժողովի 1658 թ. ապրիլի 11-ի գիտի արձանագրութեամբ մէջ կարդում ենք, թէ պետք է պահել երկուսին էլ. «որովհետեւ ոմն ֆրանցիսկեան (ակնարկը վերաբերում է Fr. Francesco-ին), որ անցելու է Հաւատոյ դաւանութիւնը տպագրեց, երևում է որ լեզուից չհասկանալով՝ հաւատքի վերաբերեալ միտքերն անգամ տպագրել է բազմաթիւ սխալներով» (տե՛ս Acta, vol. 27, f. 111-112, n. 1):

33 St'u SOCG, vol. 167, f. 149: Հմմտ. Clementis Galani, Historia Armena, ecclesiastica & politica, Coloniae, 1686, pp. 240-245, նամակի լատիներէնը նոյն տեղում, էջ 242:

որ ինքը, Գալանոսի ձեռքով, երկուսով (Յովհաննէս Եղեսացու հետ միասին) ստորագրեն հռոմէական հաւատոյ դաւանանքին, Խաչատուրը արդէն հրաժեշտ էր տուել աթոռին, իսկ Յովհաննէս արքեպիսկոպոսը վախճանուել էր:

Գալանոսը 1643 թ. փետրուար 22-ի նամակով Հաւատասփիւռի ժողովին իմացնում է եղելութիւնը, տեղեկացնելով, թէ նրանց փոխարէն կաթողիկէ դաւանութիւն է տուել իր աշակերտներից Թոմաս վարդապետը, որ «պապ դառնալիք է» (իմա՛ պատրիարք – Մ. Կ.): Թոմաս վարդապետը իր դաւանութիւնը կատարում է Գալանոսի եւ Պոլսի լատին պատրիարքական փոխանորդի ներկայութեամբ եւ ուխտում է գործել իբր միսիոներ իր ազգի մէջ³⁴: Բացի այդ նամակից, նոյն օրը, փետրուար 22-ին Գալանոսը գրել է նաեւ Հաւատասփիւռի ժողովի քարտուղարին՝ Ինկոլիին, ասելով թէ ուղարկում է Հաւատասփիւռի ժողովին ուղղուած Թոմաս վարդապետի 1643 թ. փետրուար 12 թուակիր նամակը, որի լատիններէն թարգմանութիւնը, Հաւատասփիւռի ժողովին օգնելու համար կցում է նամակին³⁵:

Գալանոսի յիշեալ նամակը, որ աւետում է Թոմաս վարդապետի դարձը, կարդինալ Պամփիլիոյի³⁶ կողմից զեկուցւում է Հաւատասփիւռի ժողովի 1643 թ. յունիսի 1-ի նիստին, ուր առհասարակ գոհունակութեամբ են լսում լուրը եւ որոշում են Գալանոսին գրել գովասանական նամակ՝ որպէսզի շարունակի նոյն կերպով գործել. նմանապէս գրել ողջոյնի նամակ Թոմաս վարդապետին եւ քաջալերել, որ-

34 St'u SOCG, vol. 168, f. 315:
35 Գալանոսի նամակը տե՛ս St'u SOCG, vol. 168, f. 328: Թովմաս վարդապետի նամակը՝ տե՛ս անդ, f. 325: Թովմասի նամակի լատիներէն թարգմանութիւնը տե՛ս անդ, p. 334:
36 Իմա՛ Camillo Francesco Maria Pamphili (1622-1666):

պէսզի ուրիշ այլ ազգակիցները էլ առաջ- նորդի այդ ճանապարհով³⁷:

Որոշման համաձայն գրուում են այս նամակները, 1643 թ. յունիսի 17-ին՝ նախ Գալանոսին³⁸ եւ ապա Թովմա վարդապետին, հաւաստելով, որ Աստուծոց շնորհ է ստացել մտնելու ճշմարիտ հաւատքի մէջ, առանց որի իր գովելի ձեռնարկները մնա- յուն պիտի չլինէին³⁹:

Դաւիթ Արեւելցու պատրիարքութեան ժամանակ Գալանոսը, հալածանքներից խուսափելով, Կ. Պոլսից իր չորս աշակերտ- ներով փախաւ Հռոմ: Թովմա վարդապետը մնաց Պոլսում⁴⁰: Գալանոսի Կ. Պոլսի թէա- թինեան մեծաւորը՝ Լ. Զիուզեպպէ Զիուզի- չէն (Giuseppe Giudice) 1643 թ. հոկտեմբե- րի 2-ին գրում է Հաւատաստիւնի քար- տուղար Ինկուլիին թէ՛ «իմ մօտ եկան հինգ հայեր, որոնք ուզում են աշակերտել Գա- լանոսին եւ պիտի ուղղուեն դէպի Հռոմ. սրանց գլխաւորն է Տէր Թոմասը, որ այս- տեղ աշակերտեց Գալանոսին»⁴¹:

Թոմաս վարդապետը, դատելով եղած զբազրութիւնից, կարծես անընդհատ հե- տապնդում է Հռոմ անցնելու ծրագիրը: Նոյն նամակագիրը 1643 թ. փետրուար 18- ին շարունակում է գրել, թէ աշակերտների մի խումբ ուզում է Հռոմ գնալ եւ «գլխա-

ւորն է Գալանոսի ծանօթ Տէր Թոմաս վար- դապետը, որ հերետիկոս պատրիարքի հետ (իմա՛ Դաւիթ պատրիարք) վէճեր է ունե- ցել ի նպաստ կաթողիկէութեան»⁴²: Այս մանրամասնութիւնը ներկայացւում է Հա- լատաստիւնի ժողովի 1644 թ. ապրիլ 25-ի նիստին, թէ «կաթողիկէ հակում ունեցող որոշ անձեր վիճում են հայոց պատրիարքի հետ եւ փափագում են Հռոմ գալ իրենց կրթութիւնը շարունակելու համար... մինչ ուրիշները պատրիարքի հետ արգելում են, որ նրանք չյաճախեն լատինների վարժա- րանները»: Այս նիստը եզրակացնում է, որ աշակերտները պէտք է հայերէն սովորեն Գալանոսի մօտ՝ նոյն առաքելութիւնը շա- րունակելու համար⁴³:

Լ. Զիուզեպպէ Զիուզիչէն 1644 թ. ապրիլի 20-ին գրում է Հաւատաստիւնի քարտուղարին. «Արդէն երկու օր է, որ ինձ տեսնելու եկաւ Տէր Թոմաս հայը, որ նախ- կինում աշակերտել էր Հայր Գալանոսին. եւ որ ինչպէս գրեցի, ուրիշ հինգ աշակերտ- ների հետ այդ կողմերը գալու մտադրութիւն ունի: Ներկայումս սա վար- դապետ դարձաւ, կաթողիկէ է, ամբողջ հայ ազգի կողմից լաւ է ընդունուած, եւ Ս. ժո- ղովից էլ նամակ է ստացել, ուր գովաբան- ւում է իր եռանդը, քանի դեռ արմատախիլ է անում հերետիկոսութիւնը: Ներկայումս սա յիշեալ ազգի Պատրիարք դառնալու յա- ւակնորդ է, որ եթէ Աստուծոյ օգնութեամբ իրականանայ, ապա աւելին փափագելն անհնարին է, այս ազգին օգնելու համար գործածուած են բոլոր միջոցները եւ այն նուազագոյնը, որ կարող եմ անել օգնելու, պիտի անեմ: Իսկ եթէ չյաջողի, որոշել է Հռոմ գնալ ու ուսումն ամբողջացնել, որ այստեղ սկսել էր Գալանոսի հետ»⁴⁴:

42 Տե՛ս SOCG, vol. 170, f. 370-371:
43 Տե՛ս Acta, vol. 16, f. 87, n. 42:
44 Նամակի իսպալերէն բնագրում ասում է. «Saran- no di due giorni che mi è venuto è trovar Der Thoma armeno idiscepolo che fù gia del P. Galano,

37 Տե՛ս AP, Acta Sacrae Congregationi de Propaganda Fide (այսուհետեւ՝ Acta), vol. 15, f. 342, n. 33:
38 Տե՛ս AP, Lettere volgari, vol. 21, f. 204r:
39 Իսպալերէն բնագրի այս հատուածում ասում է. «... indirizzare la santa mente di lei nella strada dal vero credere, senza la quale fondamento non ha dubbio che non poteva sussistere la fabrica delle sue loderoli o porazioni» (տե՛ս Lettere volgari, vol. 21, f. 204v): Նոյն այս նամակը լատինալեզու Գա- լանոսը գտնելով է իր հատորում, տե՛ս Clemente Galano, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն ընդ մեծի սուրբ եկեղեցւոյն Հոովմայ/ Concilia- tionis ecclesiae Armenae cum Romana..., Pars Pri- ma, Romæ, 1650, p. 183-184):
40 Տե՛ս Մաղաքիս արքեպ. Օրմանեան, Ազգա- պատում, Բն. Բ, § 1696-1697, էջ 2871-2875:
41 Տե՛ս SOCG, vol. 168, f. 309-310:

Այս լուրն էլ զեկուցւում է Հաւատա- ստիւնի ժողովի 1644 թ. յունիսի 21-ի նիս- տին, որի արձանագրութիւնում ասւում է. «Thomam arm. discipulum P. Cl. Galani factum esse Vartabiet, et esse evasurum Armenorum Patriarchan» (Կղեմէս Գալանո- սի աշակերտ Թոմաս հայը դարձել է վար- դապետ եւ լուր է տարածուել, որ կարող է հայոց պատրիարք դառնալ)⁴⁵:

Նոյն օրերին գրուած լուրերի համա- ձան, Դաւիթ Արեւելցին դրամի զօրու- թեամբ գահընկեց է արւում պատրիարքա- կան աթոռից, արքունիքից վճիռ հանելով թէ այնուհետեւ հայոց եկեղեցին պէտք է կառավարուի ոչ թէ պատրիարքի կողմից, այլ տասներկու եպիսկոպոսների, որպէսզի աշխարհականները պարտաւոր չլինեն հա- շիւ տալու իրենց պատրիարքին, որ յունաց պատրարքին նմանուելով էր հետեւում ե- լեւմուտքին⁴⁶:

Դժուար է ասել այս դէպքերից անմի- ջապէս առաջ թէ՛ յետոյ, Գալանոսի պատ- մելով, Թոմաս վարդապետին յաջողուել է գրաւել պատրիարքական աթոռը եւ Դա- լիթ Արեւելցուն աքսորել տալ Կիպրոս: Սակայն Թոմասի պատրիարքութիւնը հա- զիւ մի քանի օր կամ շաբաթ է տեւել ու չկարողանալով վճարել պետական տուրքը՝

il quole come scissi a V.S. stara per venir cotti con altre 5 dicepoli armeni: Hora pio è fatto Quartapied, è catholico, e molto ben veduto da tutta la nazioni armene et ha anche havuto lettere da S. Congrega- zione, comandanto molto il suo zelo, è che essendo all'istirpezione dell'heresie. Hora pio sta per esser fatto Patriarca di dª nazione, il che se con lavuto di Dio everrà, non si potrà desiderar maglio per aiuto di pia nazione s'adopran tutti i mezzi possibili et io in qual poco l'aiuto et l'aiutero» (տե՛ս SOCG, vol. 170, f. 377):

45 Տե՛ս Acta, vol. 16, f. 128, n. 31:
46 Լուրերը քաղել ենք Հաւատաստիւնի քարտու- ղար Ինկուլիին Պոլսի լատին պատրիարքական փոխանորդ Fr. Giovanni Battista-ի 1644 թ. յունիսի 18-ի (տե՛ս SOCG, vol. 170, f. 54) եւ O. Pantaleo Ligaridi-ի 1644 թ. յունիսի 22-ի (տե՛ս SOCG, vol. 170, f. 296) նամակներից:

ստիպուած է եղել թողնել Աթոռը եւ անց- նել Արեւմուտք⁴⁷:

Թովմա Բերիացիի Փարիզում

Երեք տարուայ լուրթիւնից յետոյ, Թովմա վարդապետի մասին լսւում է Փա- րիզից: Տեղի առաքելական նուիրակը 1647 թ. յուլիսի 12-ին գրում է Հռոմ Ս. ժողո- վին, տեղեկացնելով, որ քաղաք է հասել ոմն «Հայր Թոմաս Անտիօքացի» ("P. Thomaso Antiocheno"), որ ինքն իրեն ա- նուանել է տալիս Կ. Պոլսի հայոց պատ- րիարք ("che si sa chiamare Patriarca di Costantinopoli della Nazione Armena"): «Սա գալիս է Միւնստերից ("Monster") եւ Բրիւսելից ("Brusselles"), ուր իր մասին բարի համբաւ էի թողել, նոյնը շարունա- կում է նաեւ այստեղ իր երկդիմի խօսակ- ցութիւններով»: Թոմասն, իբր քարտու- ղար, իր հետ պատեցնում է մի սարկաւազի եւ երբ Փարիզի նուիրակին յայտնում է Հռոմ մեկնելու ծրագիրը, հանդիպում է նրա ընդդիմութեանը, քանի որ առանց պապի թոյլտուութեան եւ հրամանի չէր կարող Հռոմ ուղեւորուել⁴⁸:

Փարիզի նուիրակի այս տեղեկութեան հիման վրայ Հաւատաստիւնի ժողովից հրահանգւում է շրջակայ բոլոր հաւա- տաքննիչներին, 1647 թ. օգոստոս 10 թուակիր հրահանգով, հետեւեալ բովան- դակութեամբ. «Յրանսիայի նուիրակից ի- մացանք, որ ոմն Թոմաս Անտիօքացի ճա- նապարհ է ելել դէպի Հռոմ: Իրեն մասին լաւ վկայութիւններ չունենք, նաեւ չգի-

47 Գալանոսը գրում է. «Thomas praedictus qui, postquam cum Dauide Patriarcha diu apud Turca- rum Praesidem altercatus fuit; victoria potitus, illum in Insulam Cyprum relegari fecit, ac seipsum eligi Patriarcham: cum tamen defunctio pecuniae, quam populus in huiusmodi promotionibus Imperatori Turcarum elargiri solebat, nequiuisset deinde ad Sedis peruenire possessionem, Romam se contulit» (տե՛ս Clemente Galano, Միաբանութիւն հայոց սուրբ եկեղեցւոյն, p. 183v-184):
48 Տե՛ս SOCG, vol. 293, f. 161:

տենք թէ հաւատոյ դաւանութիւն արե՞լ է թէ ոչ, անծանօթ է մեզ նաեւ իր ճանապարհորդութեան նպատակը: Պապը հրահանգ տուեց, որ արգելէք, ուր որ իրեն գտնէք, որպէսզի չմեկնի Հռոմ առանց պապական հրամանի: Փորձէք իմանալ նրանից նաեւ Հռոմ գալու նպատակը»⁴⁹:

Թովմաս վարդապետի Փարիզում եղած ժամանակ քաղաք է ժամանում մի յոյն կրօնաւոր՝ *Ciriaco* անունով, ու առանց իմանալու, որ Թովմասը Փարիզում է գտնուում, որին ծանօթ էր, իր մասին յայտարարում է թէ հայ եպիսկոպոս է: Կիրակոսը տեսնելով, թէ Թովմասը Փարիզում է, յայտարարում է նրա պարզ կրօնաւոր լինելը, հարում է Տրապիզոնի յոյն Կիւրեղ եպիսկոպոսին, որ չեզոքացնելու համար Թովմաս վարդապետի խօսքերը՝ առաքելական նուիրակը յայտնում է թէ Թովմաս վարդապետը ստախօս է, քանի որ ներկայացել է իբր Պոլսոյ Հայոց պատրիարք, որն իրականութեանը չի համապատասխանում:

Թովմաս վարդապետը, հաւանաբար չցանկանալով յոյներէ հետ գլուխ դնելը, թողնում է Փարիզը եւ ուղղուում Իտալիա, սակայն 1648 թ. փետրուարին երբ Թովմասն անցնում էր Լիվոռնո, այստեղ է ժամանում նաեւ նոյն Կիրակոս յոյն կրօնաւորը: Թովմասը հաւաքում է շուրջ 50 պարսկահայեր, ծանօթ յոյն Կիրակոս կրօնաւորին, ստորագրութիւններ է հաւաքում նրանցից Կիրակոսի եպիսկոպոս չլինելու մասին, պարզապէս ասացուցելու համար, թէ ինքը ճշմարտախօս է, այսինքն անցելու եղել է Պոլսի Հայոց պատրիարք: Այս վկայականն էլ հետը վերցրած ուղղուում է դէպի Հռոմ⁵⁰:

49 St' u SOCG, vol. 293, f. 161:
50 Այս տեղեկութիւնները հաղորդում է Լիվոռնոյի հաւատարմագրից *Vittorio Borgia*-ն իր գրած 1648 թ. փետրուար 29 թուակիր նամակով, որն ուղղուած է Հաւատաստիւթի ժողովին (տե՛ս SOCG, vol. 293, ff. 165-166):

Թովմաս Բերիացին Ձեռնվայում եւ Լիվոռնոյում

Թովմաս վարդապետը Փարիզից անցնում է Ջենովա: Տեղի հաւատաքննիչը՝ *Fr. Prospero di Fiorenza*-ն (*Inquisizione di Genova*) ստացած լինելով Հռոմի հրահանգը, 1648 թ. փետրուար 1-ին պատասխանում է, տալով մի շարք մանրամասնութիւններ Թովմաս վարդապետի անցեալ կեանքի մասին, որոնք համապատասխանում են վերեւում մեր գրածներին. «Այստեղ է հասել Թովմաս Անտիոքացին, որի մասին ինձ գրել էիք: 45 տարեկան է, համեստ, քչախօս, հասկանում է իտալերէն, իրեն կարողանում է հասկացնել: Իտալացի քահանայի նման կրում է սեւ զգեստ, բացի մէջքի դօտիից եւ գլխարկի աստառից, որ կանաչ էին (*che sono verdi*): Ունի երկու ընկերներ, քահանայի նման հագնուած, խօսում են Հայերէն նաեւ անկատար իտալերէն:

Ունի մի շարք վկայականներ, Պոլսի լեհ դեսպանից, Լէոպոլսի դքսից եւ ուրիշ շատերից, յատկապէս Լէոպոլսի եպիսկոպոսից, որ վկայում են թէ սա զինուորներից կողոպտուել է: Պատարագելու հրաման ունի շատ եպիսկոպոսներից:

Հռոմ գնալու մասին ոչինչ չկարողացայ իմանալ, միայն թէ այսքանն է ասում, թէ գնում է իր հպատակներին ծառայելու եւ կարելոր հարցեր լուծելու համար:

Պատրիարք դառնալուց առաջ գրել է Հռոմ եւ տեսայ ստացած պատասխանը՝ կարդինալ *Onofrino*⁵¹-ից, որ իրեն քաջալերում է իր գործում: Ասում է, թէ Ս. ժողովը շատ լաւ գիտի Կ. Պոլսում իր արածը, յատկապէս հերետիկոս պատրիարքին վռնդելու գործում: Ասում է, թէ արամաբանութեան, Ֆիզիկայի եւ հայկաբանութեան մասին Հայերէն լատիներէն լեզուներով

51 Իմա՝ *Girolamo Cardinal Colonna* (1604-1666), յայտնի որպէս *S. Onofrino*-ի տիտղոսատր կարդինալ:

գիրք է տպել եւ ցոյց է տալիս զոյգ լեզուներով գրուած մի շարք գրութիւններ: Ասում է նաեւ, որ Հռոմում իրեն ճանաչում են Կղեմէս Գալանոսը, ինչպէս նաեւ զոմիրիկեան Ն. Փրանկիսկոսը:

Երբ իրեն յայտնեցի, որ քաղաքից չպէտք է հեռանայ առանց պապական հրամանի, դժուարութիւններ չյարուցեց, ասելով, թէ պատրաստ է նոյնիսկ երեք տարի սպասել: Իր դժուարութիւնը ապրուստն է, որում մասամբ օգնեցի իրեն: Երեկ ինձ այցելեց, ցաւում էր իրեն ընկերացողների համար»⁵²:

Թովմաս վարդապետը Ջենովայում իջեւանել էր տեղի հայերի գլխաւորի տանը, որի անունը չկարողացանք գտնել: Սա 1648 թ. փետրուար ամսի կէսին Թովմաս վարդապետի կողմից ներկայանում է *Fr. Prospero*-ին՝ Հռոմի կողմից նշանակուած հաւատաքննիչին, Թովմաս վարդապետի համար Լիվոռնո մեկնելու թոյլտուութիւն հրաման խնդրելու, ուր նրա բազմաթիւ հայրենակիցները կարող էին օգնել իրեն: *Fr. Prospero*-ն չէր կարող ինքնագլուխ թոյլ տալ, առանց Հռոմի իմացութեան եւ ահա 1648 թ. փետրուարի 29-ին տեղեկացնում է Ս. ժողովին, թէ նոյն առաւօտ Թովմաս վարդապետը մեկնել է Լիվոռնո, յիշեալ ազգային հետ⁵³:

Փետրուարի կէսին Թովմաս վարդապետը Լիվոռնոյում է, որի հաւատաքննիչը՝ Վիտորիո Բորջին (*Vittorio Borgia*) էր, մեզ քաջ յայտնի է նախորդ տարիներին Լիվոռնոյում տպագրական գործունէութիւն ծաւալած Յովհաննէս Ջուղայեցու մասին Հռոմ ուղարկած իր բոլոր տեղեկութիւնների շնորհիւ⁵⁴: Վիտորիո Բորջին

52 St' u SOCG, vol. 293, ff. 163-164:
53 St' u SOCG, vol. 293, ff. 165:
54 Այս մասին անլի մանրամասն տե՛ս Ն. Սահակ Ծեմճեմճեան, *Հայ տպագրութիւնը եւ Հռոմ (ԺԷ դար)*, Վեներիկ-Ս. Ղազար, 1989 («Բազմապէս» հայագիտական մատենաշար, 29), էջ 74-75: Վիտ-

Թովմաս վարդապետի Լիվոռնոյ հասնելու եւ նրա կեանքի մասին տեղեկութիւնները քաղելով տեղի հայերից եւ Հէնց իրենից՝ Թովմաս վարդապետից՝ դրանք Հռոմ, Հաւատաստիւթի ժողովին է հաղորդում 1648 թ. փետրուար 29-ի նամակում:

Նամակի բովանդակութիւնը հետեւեալն է: Թովմաս վարդապետը հազիւ Լիվոռնոյ էր հասել, երբ հաւատաքննիչ Վիտորիո Բորջին հասկացնում է իրեն, որ չի կարող Հռոմ շարժուել ու ստանում է Թովմասի պատասխանը՝ թէ հարցին տեղեկ է եւ Ջենովայից գրել է Հաւատաստիւթի ժողովին եւ օրեցօր սպասում է պատասխանին: Երբ Վիտորիո Բորջին յայտնում է Թովմաս վարդապետին Փարիզի նուիրակի դժգոհութիւնն իր անձի հանդէպ, Թովմասը պատասխանում է, թէ սկզբնական շրջանում նուիրակը լաւ էր տրամադրուած իր հանդէպ, սակայն յոյն Կիրակոս կրօնաւորի, այն է սուտ եպիսկոպոսի Փարիզ հասնելուց յետոյ է պղտորուել եւ այս առիթով Վիտորիո Բորջին տալիս է պատահած դէպքերի մանրամասնութիւնները, որ վերեւում բերեցինք: Թովմաս վարդապետը Վիտորիո Բորջին ցոյց է տուել իր ունեցած վկայականները, Հռոմից ստացած նամակը, լեհահայոց Նիկոլ Թորոսովիչ արքեպիսկոպոսի վկայականը՝ թէ ինքը եղել է Պոլսի պատրիարք եւ թէ հաւատոյ դաւանութիւնը կատարել է Պոլսի առաքելական լատին նուիրակի ներկայութեամբ եւ որի մասին կարող է վկայել նաեւ Կղեմէս Գալանոսը: Նամակն աւարտում է հետեւեալ խօսքերով. «Հռոմ գալու նպատակը ամբողջ Հայ ազգը Ս. Թեոփիլոսին ենթարկելն է եւ եթէ ձեր վստահութիւնը լրացուցիչ տեղեկութիւններ է ուզում, ապա կարող է ստանալ Հռոմից Կղեմէս Գալանոսի աշակերտներից, Անտոնից,

որիո Բորջիի մօտ մնացիմ Յովհաննէս Ջուղայեցուց բռնագրաւուած 50 օրինակ Սաղմունքը, որոնց ճակատագիրը պղպտէ էլ անյայտ մնաց:

Գրիգորից, Սարգիսից, որոնք Հարցին լաւատեղեակ են: Ուստի խնդրում եմ, որ քաղցրութեամբ վարուել սրա հետ, որովհետեւ եկեղեցու օգուտն այս է պահանջում: Ներկա կը գտնէք այն վկայականը, ուր մերժում է յոյն կրօնաւորի (Կիրակոսի) եպիսկոպոս լինելը, նրա որ Փարիզում այնքան չարիք հասցրեց [Թովմաս վարդապետին]»⁵⁵:

Հաւատաստիւ լուրի 1648 թ. մարտի 23-ի նիստին կարգինալները քննում են Հարցը, սակայն զգուշանում են Թովմաս վարդապետին Հռոմ գալու թոյլտուութիւն տալուց, վախենալով որ Ֆինանսական ծանրութիւն կը ընկնի իրենց վրայ եւ Հարցը հետաձգում են քննելու նպատակով⁵⁶:

Լիվոնոյի Հաւատաքննիչը, Վիտորիո Բորջին, միջնորդի դեր ստանձնելով, բարեխօսում է; որպէսզի Թովմաս վարդապետին հրաման տրուի Հռոմ գնալու, ասելով, թէ նա որեւէ դիտաւորութիւն չունի ծանրանալու (բեռ դառնալու) Ս. ժողովի վրայ, ու տեսնելով այսքան զգուշութիւն ու դանդաղութիւն Հռոմի կողմից «նեղացաւ, գրում է Վիտորիո Բորջին 1648 թ. ապրիլի 28-ին, - ասելով, թէ այսքան հեռաւոր տեղեր է եղել Ս. աթոռին ներկայանալու համար եւ որեւէ բան չի խնդրում եւ չի հասկանում, թէ ինչու իրեն պիտի մերժուի նորին սրբութեան ունկնդրութիւնը»⁵⁷:

Մէկ այլ առիթով Վիտորիո Բորջին գրում է կարգինալ Luigi Carponi-ին (1582-1659), որպէսզի վերջապէս թոյլ տրուի, որ

Թովմաս վարդապետը Հռոմ մեկնի, որովհետեւ «չարչարուել է իր ծէսը լատինականին մօտեցնելու համար, որի համար Պոլսի հայերից նեղութիւններ եւ հակառակութիւններ է կրել, յատկապէս Քրիստոսի մէջ երկու բնութիւն խոստովանելու եւ բաժակի մէջ ջուր խառնելու համար: Պատրիարքական ընտրութեան նկատմամբ ինձ ցոյց տուեց այն եպիսկոպոսների վկայականը, որոնք իրեն պատրիարք էին ձեռնադրել (!) եւ մէկն էլ՝ Պարսկահայերի մեծ կաթողիկոսի կնիքով, որ իմանալով թէ Լեհաստանի վրայով Իտալիա պիտի գնայ, յանձնարարական էր դրել Նիկոյ արքեպիսկոպոսի հետ միութեան նկատմամբ»⁵⁸:

Ի վերջոյ թոյլտուութեան հրամանը հասնում է եւ Թովմաս վարդապետը մեկնում է Հռոմ: 1648 թ. մայիսի 24-ին Բերիացի ոմն Pietro Dipi անունով, Հաւանաբար ազգութեամբ հայ, գրում է Հաւատաստիւ լուրի Ինկոլիին. «Անցեալ շաբաթ քաղաքից (իմա՝ Լիվոնոյից) դէպի Հռոմ մեկնեց Հայոց պատրիարքը, որ իրապէս կաթողիկէ է: Իր մօտ մնացի մի քանի օր ու տեսայ, որ ապրում է կաթողիկէի պէս, արժանի է որ օգնէք իրեն»⁵⁹:

Թովմաս Բերիացիի Հռոմում

Թովմաս Բերիացիին Հռոմ հասնելով, տեղի սովորութեան համաձայն սկսում է խնդրագրեր ներկայացնել Ս. ժողովին գործերն առաջ տանելու համար: Հռոմում էր գտնւում իր ուսուցիչ Կղեմէս Գալանոսը, որը մեծ հնարաւորութիւններ ու դիւրութիւններ է ստեղծում իրեն, յատկապէս

շարադրելու համար իր խնդրագրերը Ս. ժողովին ծանօթ բառամթերքով եւ հոգեբանութեամբ:

Թովմաս Բերիացու առաջին խնդրագիրը, ուղղուած Հաւատաստիւ լուրի ժողովին կրում է 1648 թ. յունիսի 14 թուականը, ուր խնդրում է, որ իր տրամադրութեան տակ դրուի Fr. Giovanni Nazzari⁶⁰ հայը, որ գիտէր իտալերէն, որպէսզի օգնի իրեն որպէս թարգման: Նամակի տակ ստորագրել է «Tomaso vartabiet armeno, alessio Patriarca di Constantinopoli della nazione Armena»⁶¹:

Երկրորդ, անթուական խնդրագրով, ուղղուած ... (անընթեռնելի), Թովմաս Բերիացիին տեղեկացնելով, թէ «Հռոմ է եկել այցելելու սրբատեղիները եւ համբուրելու ս. պապի ոտքը եւ խօսելու Հաւատքի հարցերի մասին. խնդրում է այն կարճատեւ ժամանակը, որ Հռոմում է ապրելու՝ հնարաւորութիւն տալ բնակուել պալատում»⁶²:

1648 թ. յուլիսի 7-ի խնդրագրով ներկայացնելով իր կացութիւնը, թէ «Պոլսի հայ ժողովրդի մի մասը իրեն պատրիարք է ընտրել եւ ինքը չկարողանալով թուրքերին վճարել պէտք եղած տուրքը, հայ հերձուածողներից Հալածուելու վախից փախել է քաղաքից: Նախկինում իր տանը հիւրասիրել էր մի շարք միսիոներների եւ նրանց աշակերտներին, այժմ զրկուած է ամէն տեսակ բարիքներից՝ խնդրում է մի պատուաւոր պաշտօն»⁶³:

Չորրորդ, անթուական մի այլ խնդրագրով, Թովմաս Բերիացիին ունկնդրութիւն է խնդրում նորին սրբութիւն պապից⁶⁴:

Հռոմի Ս. աթոռը որեւէ անձի նկատմամբ որոշումներ կայացնելուց առաջ միշտ նախապէս մանրամասն տեղեկութիւններ է հաւաքել յիշեալ անձի մասին, առաւել ապահով ու անվրէպ գործելու համար: Այս պարագայում Կղեմէս Գալանոսն է, որ լիովին տեղեակ էր Հարցին եւ Հարց յարուցող անձնաւորութեանը տալիս է իր երաշխաւորութիւնը, միաժամանակ թելադրանք էր նպաստ Թովմաս վարդապետի 1648 թ. յուլիսի 19-ին շարադրելով հետեւեալ վաւերագիրը.

«Ես, Տէր Կղեմէս Գալանոսս, գնացի Հաւատաստիւ լուրի ժողովի նախագահ կարգինալ Ինկոլիի մօտ, Թովմաս վարդապետի մասին վկայութիւն տալու, թէ նա վարժապետ էր ամբողջ հայ ազգին, քանի դեռ Պոլսում էի եւ ճանաչում էի իրեն:

Այս վարդապետը Հալէպից է, եզակի հեղինակութեան տէր մարդ, հայ ազգի կողմից յարգուած, ամենաազնուական ընտանիքի զաւակ: Ես իրեն միշտ գտայ կաթողիկէ հաւատքով, իր ազգի հերետիկոսների եւ անկարգութիւնների թշնամի, հոմեֆական հաւատքի նկատմամբ բարեկամ եւ եռանդով լցուած, կրթուած է եւ այդպէս է ուզում տեսնել նաեւ իր ազգը: Այս պատճառով ինձ ընդունեց Պոլսում, մի տարի իր ծախսով ինձ պահեց, ինձանից փրկիսովայական եւ աստուածաբանական մի շարք նիւթերի մասին դասեր վերցրեց, դիւրութիւններ ստեղծելով, որ սովորեցնեմ հայերին: Եօթը տարի առաջ, Պոլսում մեր պատրիարքական փոխանորդի առաջ, կատարեց Հաւատոյ դաւանութիւն, որին ստորագրեց թէ՛ ինքը եւ թէ՛ որպէս վկայ՝ պատրիարքական փոխանորդը, ուղարկե-

55 St' u SOCG, vol. 293, ff. 165-166: Անկախ այս անակից, Լիվոնոյից Fr. Giulio-ն, իբրեւ սուրբ օֆիցի պառնակալ գրում է Հաւատաստիւ լուրի ժողովին 1648 թ. մարտի 1-ին, թէ քաղաք է հասել Թովմաս վարդապետը, որին յայտնել է Ս. ժողովի կամքը եւ պատասխան է ստացել, թէ ինքը հարցին տեղեակ լինելով գրել է Ջեմովայից ու սպասում է Հաւատաստիւ լուրի պատասխանին (տե՛ս SOCG, vol. 293, ff. 164):

56 St' u Acta, vol. 18, f. 56, n. 31:

57 St' u SOCG, vol. 55, ff. 264:

58 St' u SOCG, vol. 55, ff. 266:

59 St' u SOCG, vol. 55, f. 252: Լիվոնոյի հաւատաքննիչը՝ Վիտորիո Բորջին 1648 թ. յունիսի 20-ին գրում է Հաւատաստիւ լուրի քարտուղարին. «Թովմաս վարդապետը քաղաքից մեկնեց եւ այլեւս իր մասին տեղեկութիւններ չունեմ, բայց քեզանից եմ սպասում լուրերի: Ծնորհակալ եմ, որ իմ յանձնարարականներին սիման վրայ իրեն պիտի օգնես» (տե՛ս SOCG, vol. 55, f. 267):

60 Մագունով Նախիջեւանի հայ կաթողիկէ թեմից ֆրա Յովհաննէս Դոմինիկոս Նազարեանի մասին աւելի մանրամասն տե՛ս Հ. Սահակ Մեմճեմեան, Նախիջեւանի հայոց վարժարանը եւ Հռոմը, Վեներիկ-Ս. Ղազար, 2000, էջ 103-104, 110-123, 132-135, 147-150, 157-169 եւ այլ: Հմմտ. անտ՝ Carlo Longo, Silvestro Bendici. Un missionario calabrese del secolo XVII, Roma, Istituto storico domenicano, 1998.

61 St' u SOCG, vol. 53, f. 393:

62 St' u SOCG, vol. 416, f. 343:

63 St' u SOCG, vol. 417, f. 116:

64 St' u SOCG, vol. 417, f. 179:

լով այստեղ՝ Ս. աթոռ, որից ընդունեց մի սիրալիր պատասխան, որն էլ մինչեւ այսօր պահում է: Ճիշտ այդ օրերին պիտի ընտրուէր Հայոց պատրիարք, բայց Հռոմ հասնելուցս յետոյ իմացայ, որ չի ընտրուել, որովհետեւ ազգը իր հանդէպ դժուարութիւններ է յարուցել, թէ նա հռոմէական կաթողիկէ հաւատք ունի:

Ս. ժողովը կարող է օգտագործել իրեն հայ ազգի օգտի համար, սակայն կարելի է դիւրութիւններ ստեղծել, որ կատարելագործի աստուածաբանական գիտելիքները, որին ինքն էլ մեծապէս փափագում է»⁶⁵:

Թովմաս վարդապետի խնդրագրերը եւ Գալանոսի տուած վկայութիւնները յատուկ քննում են մասնաւոր նիստի ընթացքում, 1648 թ. յուլիսի 24-ին եւ որոշում են, որ այս հարցը ներկայացուի Հաւատասփիւռի ժողովի կարգինալների պաշտօնական նիստին⁶⁶: Այն գումարում է 1648 թ. օգոստոսի 3-ին, հարցը ներկայացնողն է լինում կարգինալ Սֆորցան (Sforza⁶⁷) եւ հանգում են այն եզրակացութեան, որ Թովմաս վարդապետը կրկին անգամ եւ բարձրաձայն յայտնի իր տրամադրութիւնը, եթէ ցանկութիւն ունի լինելու Հայաստանի որեւէ գա-

լառի պատասխանատու, տարածելու համար կաթողիկէ վարդապետութիւնը⁶⁸:

Թովմաս վարդապետի անունից Գալանոսը շարադրում է գրութիւնը հետեւեալ կերպ. «Թովմաս վարդապետ, հայ կաթողիկէ կրօնաւոր, քարոզիչ եւ իր ազգի ընդհանրական վարդապետ (Dottore universale), միշտ սրտում ունենալով հայ ազգի դարձը հռոմէական կաթողիկէ հաւատքին, որի մասին տեղեակ է Ս. ժողովը եւ ցանկանալով այսուհետեւ աւելի հեղինակութեամբ եւ դիւրութեամբ նուիրուել նոյն գործին, խոնարհաբար խնդրում է ձեր վսեմութիւնից, որ հաճէիք իրեն յանձնել Պոլսում եւ թուրքական սահմաններում բնակուող Հայոց պատասխանատուութիւնը: Միաժամանակ հաճէիք իրեն նշանակել աշխատանքին համապատասխան թոշակ, որպէսզի կարողանար անկախ կերպով վարել իր պաշտօնը, առանց Հայոց հետ խնդիր ունենալու իր ապրուստի համար: Նկատելի է, որ անկարելի է բացայայտ կերպով քարոզել հռոմէական հաւատքը իր հերետիկոս ազգին, առանց ատելի դառնալու այդ ազգի մեծամասնութեան կողմից, եւ հետեւաբար նրանց քարոզիչը կը մնայ առանց նիւթական միջոցների ու ապրուստի պայմանների: Վերջերս ստորագրեալս ընդհուպ հասաւ Պոլսի Հայոց պատրիարքական աթոռը գրաւելուն, լիակատար կերպով էյաջողուեց, որովհետեւ իր ազգակիցները նկատելով նրա հռոմէական հաւատքը, ետ կանգնեցին իրենց խոստումից եւ չվճարեցին թուրքին այն տուրքը, որ սովոր էին տալու եւ որով նրա ջանքերը ապարդիւն անցան...»⁶⁹:

Գալանոսը, շատ լաւ իմանալով Հռոմի մտայնութիւնները ու տիրող հոգեբանութիւնը, խնդրագիրը շարադրել էր վերջինիս քիմքին հաճելի բառամթերքով:

65 Տե՛ս SOCG, vol. 416, f. 342: Գալանոսը այլ առիթով տուել է նման մի այլ վկայութիւն հետեւեալ բովանդակութեամբ. «Յիշեալ Թովմասը, հայոց բարձրաստիճան եկեղեցականներից է եւ օրինաւոր քահանայ, միշտ կաթողիկէ է եղել եւ շատ ջերմեամբ առաքելական աթոռի հետ: Աստիճանով վարդապետ է, այսինքն իր ամբողջ ազգի քարոզիչ, որոնց մէջ բարձրագոյն աստիճան է հասնում: Թուրքից ստացաւ Պոլսի հայոց պատրիարք լինելու իրաւունք, սակայն դրամի պակասով չկարողացաւ գրաւել Աթոռը: Ունի փայլուն իմացութիւն հայոց սխալների մասին եւ ցանկանում է առաջնորդել ազգը միանալու հռոմէական սուրբ եկեղեցուն: Պոլսում օգնել է միսիոներներին, որոնցից ոմանց ընդունել է իր տանը եւ տարիներով սնուցել է իր ծախսով եւ սրա սկսանաւտս վկան եւ: Դրա համար իրեն նկատում եմ յարմար եւ արժանի է, որ նկատի առնէք իր խնդրանքը» (տե՛ս SOCG, vol. 416, f. 290):

66 Տե՛ս CP, vol. 9, f. 237, n. 5:

67 Իմա՛ Կարգինալ Federico Sforza (1603-1676):

68 Տե՛ս Acta, vol. 18, f. 142, n. 22, հմմտ. նաեւ SOCG, vol. 416, f. 290:

69 Տե՛ս SOCG, vol. 416, f. 289:

1648 թ. օգոստոս 26-ի մասնական մի ժողովի ընթացքում քննում է թէ՛ Թովմաս վարդապետի խնդրագիրը եւ թէ՛ Գալանոսի տուած վկայութիւնները եւ որոշում է նոյնը ներկայացնել պապի ներկայութեամբ գումարուելիք նիստում, վերջնական որոշում կայացնելու համար⁷⁰:

Պապի ներկայութեամբ Հաւատասփիւռի կարգինալների նիստը գումարում է 1648 թ. սեպտեմբեր 1-ին, ուր սկզբունքով համաձայնում են, որ Թովմաս վարդապետին յանձնուի թուրքական սահմաններում բնակուող Հայերի առաքելութիւնը, տարեկան 50 սկուդով՝ երեք տարուայ համար, լրացուցիչ էլ 50 սկուդ ճանապարհածախսի համար, պայմանով, որ առաքելութիւնն սկսելուց առաջ՝ ս. օֆիցի մէջ հաւատքի դաւանութիւն տայ եւ ստանայ համապատասխան վկայականները, որոնք պիտի պահուեն Հաւատասփիւռի քարտուղարութեան մօտ⁷¹:

Այս նիստից անմիջապէս յետոյ, վերջնական վճռի ընդունումից առաջ, Թովմաս վարդապետը՝ միշտ Գալանոսի գրչով, ներկայացնում է նոր խնդրագիր, հետեւեալ բովանդակութեամբ. «Հայոց Թովմաս վարդապետը (Dottore degli Armeni) յիշեցնում է ձեզ, որ վերջերս պապի ներկայութեամբ գումարուած ժողովում որոշուեց, որ նա առաքելութեան զնայ թուրք պետութեան մէջ բնակուող Հայերին: Նա սիրով է ընդունում ամէն բնո: Բայց որպէսզի լաւագոյն կերպով կատարի իր պաշտօնը, խնդրում է, որ այստեղ՝ Հռոմում, թէ՛ Գալանոսի Կղեմէս Գալանոսի մօտ խորացնի դասական աստուածաբանութեան ծանօթութիւնը, քանի որ նա արդէն ս. ժողովի մի շարք աշակերտների դասաւանդում է Հայերէն լեզուով: Խնդրում է նոյն ուսումն ընդունի նաեւ իրեն ընկերացող

սարկաւազը եւ սրա համար երկուսին էլ թոշակ սահմանուի»⁷²:

Թովմաս վարդապետին ի նպաստ վերջնական նիստը գումարում է 1648 թ. սեպտեմբերի 25-ին, ուր վճռում է նրան տալ երեք տարուայ համար տարեկան 60 սկուդ (50-ի փոխարէն) կատարելիք հոգեւոր առաքելութեան համար, նաեւ հրաման է շնորհում վեց ամիս Հռոմում հետեւելու Գալանոսի դասաւանդումներին⁷³:

1648 թ. հոկտեմբեր 7-ի նիստով որոշում է ի նպաստ Թովմաս վարդապետի յանձնարարական նամակներ գրել Գերմանիայի եւ Լեհաստանի առաքելական նուիրակներին⁷⁴ եւ իրապէս 1648 թ. հոկտեմբերի 28-ի թուականով ուղարկում են նրանց նամակները. «... սրանով, ս. ժողովի կարգինալների անունից, յանձնարարում ենք ձեզ Հայոց Թովմաս վարդապետին, որ սահմանուած է լինելու միսիոներ թուրքական սահմաններում բնակուող Հայերի մէջ: Մարդ է, որի վրայ մեծ վստահութիւն ունի իր ազգը եւ որով արժանի է ձեր յատուկ հոգատարութեանը: Կարգինալներին շատ հաճելի պիտի լինէր, եթէ դուք իրեն հոգ տանէիք, յատկապէս անցազրային դիւրութիւններ ստեղծելով եւ ձեր կարգին յանձնարարելով նրան, ում որ յարմար կը տեսնէք»⁷⁵:

Ապա որոշ ժամանակ լուռութիւն է տիրում Թովմաս վարդապետի մասին: 1648 թ. սեպտեմբերին, երբ հազիւ երկու ամիս պիտի անցած լինէր Գալանոսի դասերի յաճախումներից, որովհետեւ ստորեւ յիշուող փաստաթղթից երեւում է, որ 1648 թ. տարուայ աւարտին նա տակաւին Վենետիկում էր: Լիվոռնոյի Հաւատաքննիչ Վիտորիո Բորջին 1648 թ. նոյեմբերի 28-ին գրե-

72 Տե՛ս SOCG, vol. 416, f. 279:


73 Տե՛ս Acta, vol. 18, f. 165, n. 14:

74 Տե՛ս CP, vol. 9, f. 258, n. 2:

75 Տե՛ս AP, Lettere volgari, vol. 26, f. 111:

լով Հաւատաստիւնի ժողովի քարտուղարին, ցաւ է յայտնում, որ համաձայն Լիվոնոյում տարածուած լուրերի, Թովմաս վարդապետը առանց հրաժեշտ իսկ տալու մեկնել է Հռոմից, հետը տանելով զանազան անձերի դրամները. «մի լուր, որ ինձ մեծապէս դարմացրեց, այստեղ շատ լաւ անուն էր թողել, բայց Հռոմում երեւի ակնկալած պայմանները չգտնելով՝ դիմել է այդ միջոցին»⁷⁶: Հաւատաստիւնի քարտուղարը ղեկտեմբերի 12-ին պատասխանում է նամակին, տալով հարկաւոր բացատրութիւնները, որի համար Վիտորիո Բորջին գոհ է մնում եւ իր գոհունակութիւնն է յայտնում ղեկտեմբերի 19-ի նամակով⁷⁷:

Թովմաս վարդապետը փաստօրէն Հռոմում է մնացել 6-7 ամիս, 1648 թ. մայիսի ամսից սկսեալ:



76 Տե՛ս SOCG, vol. 55, f. 269:

77 Տե՛ս SOCG, vol. 55, f. 270:


Թովմաս Բերիացին Վեներտիկում⁷⁸

Վերելում տեսանք, որ Թովմաս վարդապետը Հռոմում թոշակաւորուելուց եւ 1648 թ. ղեկտեմբերին Հռոմը լքելուց յետոյ ճանապարհուելու էր Պոլիս կամ Թուրքիայի սահմաններում բնակուող հայոց մէջ միսիոներական առաքելութեան: Լիվոնոն հասնելով եւ լսելով, թէ Կանդիայում սրուել են պատերազմական գործողութիւնները, մնում է քաղաքում: Մինչ Հռոմի հաւանութիւնը ստանալը, երկու ամիս Լիվոնոյում մնալուց եւ տեղի հայ ազգակիցների հետ վէճերի պատճառով, դուքսի որոշմամբ վաճուելով է Լիվոնոյից: Դրանից յետոյ Թովմաս վարդապետն ուղեւորուում է Վենետիկ, ուր հասնում է 1649 թ. փետրուարին:

Վենետիկի Ս. Խաչ հայոց եկեղեցին հնուց ի վեր կուռախնձոր էր: Կաթողիկէ աշխարհում կառուցուած, ենթակայ այդ աշխարհի օրէնքներին եւ հայութիւնը սակայն չէր կարողանում հրաժարուել իր դարաւոր աւանդութիւններից: Ուստի ջանում էին գտնել եզրեր երկու կողմերին գոհացնելու համար եւ երբ ուժեղանում էր մէկ կամ միւս կողմը՝ ի յայտ էին գալիս խռովութիւնները: Ծիշտ այսպէս պատահեց նաեւ այս անգամ, երբ Թովմաս Բերիացին, հասնելով Վենետիկ, ուղեց գործել իր համոզումներին համապատասխան,

78 Թովմաս Բերիացու Վեներտիկում անցկացրած կեանքի մասին տեղեկութիւնները, ամփոփուած են Archivio di Stato di Venezia-ում (Santo Ufficio, busta 105, եւն): ԺԹ դարի վերջին դրանցից շուրջ 50-ը խնամքով հաւաքուել են Հ. Ղեւոնդ Ալիշանի կողմից: 1896 թ. փետրուար 21-ին Ղ. Ալիշանը այդքան ընդարձակ տեղեկութիւններ հաւաքելուց լետոյ, նամակով դիմել էր Հաւատաստիւնի ժողովի նախագահին, խնդրելով ատելի վաղ տեղեկութիւններ Թովմաս վարդապետի մասին: Հ. Ղ. Ալիշանի նամակը մնացել է անպատասխան: Վերջերս, մեր խնդրանքով այս թղթածրարի բարձրորակ լուսանկարները արուեց եւ մեզ տրամադրեց Սեպուհ Ասլանեանի կողմից, որին յայտնում ենք մեր երախտագիտութիւնը:

այնպէս ինչպէս սովորել էր Գալանոսից եւ խոստացել էր Հաւատաստիւնի ժողովին:



Թովմաս վարդապետը 1649 թ. փետրուար 25-ին շարադրում է մի բողոքագիր ուղղուած սրբաքննութեան ժողովին, նպատակ ունենալով գրաւել Ս. Խաչ եկեղեցին: Գրութիւնը սկսուում է «Io Tomaso Vartabiet» բառերով, ներկայանալով իբր «Missionario Appostolico Residente in Costantinopoli» եւ Պոլիս հայոց պատրիարք, եւ թէ այցելել է Ս. Խաչ եկեղեցին, որ պատկանել է կաթողիկէներին, որոնք ընդունում են պապին, որոնք ներողութիւններով ճոխացրել են եկեղեցին եւ որով եկեղեցի են յաճախում թէ՛ կաթողիկէ հայերը եւ թէ՛ լատինները, որոնք նոյնիսկ պատարագում են այնտեղ լատիներէնով: Ապա ներկայացնում է առկայ հայ քահանայի (առանց անունը տալու) վիճակը՝ իբր գինով եւ չար օրինակ ժողովրդին, բայց սրանից աւելի՝ իբր կաթողիկէ եկեղեցական օրէնքներն արհամարհող, յատկապէս պատարագելով առանց ջրախառնութեան, ընդունելով Քրիս-


տոսի մէջ մէկ բնութիւն. թէ նրանք չեն հաւատում Ս. Հոգու «ի յորդոյ» բխմանը, Հռոմի քահանայապետի գլխաւորութեանը, Քաղկեդոնի ժողովը գումարելու համար անիծում են Լեւոն պապին, մերժում են դրոշմի եւ հիւանդների օծութեան խորհուրդները: Որպէս այս բոլորի եզրակացութիւն՝ Սրբաքննութեան ատեանը պէտք է ուշադրութիւն դարձնի, որ «եկեղեցին մնայ հայ կաթողիկէ քահանաների ձեռքը, ինչպիսին էր այս եկեղեցու վերջին քահանայի՝ տէր Կարապետի եւ նրա անմիջական յաջորդների ժամանակ»⁷⁹:

Լիվոնոյի հայերն ընդդէմ Թովմաս վարդապետի

Ոչ թէ Վենետիկի, այլ Լիվոնոյի հայերը Թովմաս վարդապետի դէմ դիրքաւորուեցին շարադրելով մի բողոքագիր: Այնպէս է թւում, թէ Լիվոնոյի հայերը Թովմաս վարդապետի հետ նախկինում խնդիրներ են ունեցել, նրա Հռոմից գալուց յետոյ եւ ներկայումս օգնութեան են հասնում Վենետիկի իւրայիններին:

Գրութիւնը դարձեալ իտալերէն է, շարադրուած Լիվոնոյում՝ 1649 թ. մայիսի 22-ին, 43 կնիքներով վաւերացուած, որոնցից 33-ը գրութեան առաջին թերթի լուսանցքներում, 10-ը՝ գրութեան թիկունքին, ստորագրողների մեծամասնութիւնը ջուղայեցիներ են, որոնցից գլխաւորը՝ Սաֆարը՝ գրութեան տակ հայերէն յաւելում է. «Էս գիրս խաջայ Սաֆարին յուզուումն գրվեցաւ, որ էն վարդապետն մեր խաչի վարդապետ չէ՝ մեզ դաբուլ չէ: Ջողայեցոյ ամէնոյ վկայութեանով գրվեցաւ»:

79 Տե՛ս Archivio di Stato di Venezia, Santo Ufficio, busta 105: Յաջորդաբար բերուող վաւերագրերը եւս քաղուած են այս թղթածրարից, ուր պակասում է էջարդութիւնը:



Գրույթեան բովանդակութիւնը բողոք է թովմաս վարդապետի դէմ, իբր «չար եւ ամենաւատ բնաւորութեամբ (pessima e male natura), որի հետեւանքով վնասուած է Պոլսից, Լիվոնոյից եւ այլ վայրերից» եւ որով նոյնն են պահանջուած անյետաձգելի կերպով Լիվոնոյի հայերը՝ այսինքն թովմաս վարդապետը պէտք է վտարուի թէ՛ Լիվոնոյից եւ թէ՛ Վենետիկից: Խնդրագիրը կատարուած է 150 հայ պատուաւոր վաճառականների անունից, որոնց գլխաւորն է պարոն Սաֆարը, եւ որոնք պաշտօնապէս իրենց գործակատար են ճանաչուած Սահակի որդի Յակօբին:

Վենետիկի հայոց բողոքը եւ դատական ատեանը

Թովմաս վարդապետի դէմ Վենետիկի հայերի զայրոյթը գագաթնակէտին է հասնում 1650 թ. յունուար ամսին, երբ ամբաստանութիւնների տարափ տեղացին թովմաս վարդապետի վրայ, ջանալով հասնել իրենց նպատակին, այն է՝ վտարել վարդապետին եկեղեցուց եւ Հայ տնից եւ շատ ա-

ւելի լաւ՝ Վենետիկ քաղաքից, ինչ որ առայժմ մասնակի էր յաջողուած իրագործել:


Ա. Առաջին բողոքագիրը կրում է 1649 թ. դեկտեմբերի 20 թուականը եւ գրուած է մի ձեռագրով եւ յաջորդաբար թուարկուած են հետեւեալ անձանց անունները, ում անունից այն գրուած է՝

- D. Vlican de Joseph Armeno, mercante Persiano,
- Panos Armeno mercante Persiano,
- Agamal nominato Priero Toscano Armeno,
- Giacomo di Isaac Armeno,
- Giorgio Hochilglia Armeno, habitati in Venetias".

Բուն գրութիւնը, գրուած այլ ձեռագրով եւ թուագրուած 1650 թ. յունուար 14-ով, ուղղուած է Վենետիկի լատին պատրիարքին, որին համառօտ ներկայացնում են խնդրի էութիւնը, ապա թուարկում են Թովմաս վարդապետի դէմ եօթ մեղադրանքներ, խնդրելով որ վերջապէս նրան տրուի արժանի մի պատիժ: Խնդրագիրն ասում է, թէ թովմաս վարդապետը, որ ինքնիրեն կոչուած է Պոլսի պատրիարք, Վենետիկ գալով լատին պատրիարքի հրամանով, միայն մի քանի օրուայ համար քաղաքում մնալու եւ Ս. Խաչ եկեղեցում պատարագելու, ապօրինի կերպով ուզեցել է տիրել եկեղեցուն, խռովելով ժողովրդին, քանի որ կամայական կերպով սկսել է փոխել հայկական ծէսը, որ երկար տարիներ տարբեր կերպ էր կիրարկուած:

Այսպիսով, վերոյիշեալ հինգ հայագրի վաճառականները, միանալով Վենետիկում մշտապէս բնակուող այլ հայերի, խնդրում են, որ Ս. Խաչ եկեղեցուց վտարուի թովմաս վարդապետը եւ վերսկսուի լատինական պատարագը, ինչպէս էր նախապէս, որպէսզի վերանայ նաեւ գայթակղութիւնը, որին թովմաս վարդապետը տեղիք է տալիս իր ոչ օրինակելի կեանքով:

Գրույթեանը հետեւում է առանձին էջով եօթ կոնկրետ մեղադրանքները.



1. Հայոց պատրիարք կոչուած Թովմաս վարդապետը, շուրջ մի տարի է, որ Վենետիկում է, վարում է իր կրօնական զգեստին (սքեմին) ոչ վայել կեանք, ծայր աստիճան խղճի ազատութեամբ ապրելով, պատարագելով եւ կամայականօրէն ծոմեր պահելով մերթ լատին, մերթ հայկական ծէսի համաձայն, գայթակղութեան մղելով ժողովրդին:

2. Ապրում է անպարկեշտ, տարակուսելի ու գայթակղեցուցիչ անձանց հետ, ինչը հաստատող վկաներ կան:

3. Սա նկարագրով անհաւատ է, կռուարար եւ վիճաբանող, զանազան անձանց երաշխաւոր լինելու համար յաճախում է դատարաններ, գրամով օգնելու նրանց վէճերին, յարուցելով շարունակական, նոյնիսկ ազգամիջեան, անհամաձայնութիւններ:

4. Թէ՛ յիշուած եւ թէ՛ արած այլ չարիքների համար վտարուել է բոլոր քաղաքներից ու վերջերս նաեւ Լիվոնոյից:

5. Հանրութեան կարծիքով յիշեալ անձն անգամ լաւ քրիստոնեայ չէ, ոչ մի

ծէս ամբողջութեամբ չի պահում, այլ փոփոխում է համաձայն պարագաների:

6. Հանրութեան մէջ կարծիք է տարածուած, որ վերոյիշեալ վարդապետը փախել է իր մեծաւորից, որից վնասուել է իր չար բարքերի պատճառով: Ասուածի ապացոյցն այն է, որ կաթողիկոսից կնքուած վկայական չունի, հաւաստի կնիքներով, որոնց նմանը պահուած է այստեղ՝ Վենետիկում:

7. Յիշեալ վարդապետը Վենետիկում [Ս. Խաչ եկեղեցում] (բնագրում՝ Parochia di S. Giuliano - Մ. Կ.) պատարագի ընթացքում բանադրել է երեք պարսկահայ վաճառականների (tre Mercanti Persiani Armeni), որոնք մերժել էին իրեն դրամական աջակցութիւն ցուցաբերել: Այս արարքը ամբողջ ազգի մէջ մեծ գայթակղութեան պատճառ հանդիսացաւ:

Ինչպէս նշեցինք, այս, 1650 թ. յունուար 14 թուակիր գրութիւնը ներկայացուած է Վենետիկի պատրիարքին: Նոյն օրը կարդալով նաեւ եկեղեցական ատեանի ներկայութեամբ, որոշուած է քննել հարցը, այն է՝ լսել նաեւ վկաներին՝ հարցին ամբողջապէս տեղեկանալու եւ վերջնական որոշում առնելու համար:

Բ. Երկրորդ անթուական բողոքագիրը ուղղուած սրբաքննութեան ատեանին, գրուած մի «անյայտ» («persona incognita») ազգային գործչի կողմից, Վենետիկահայոց անունից, որոնց անունները թուարկուած է մի առ մի: Սա համառօտ պատմում է թովմաս վարդապետի կեանքը, այսինքն որ թովմաս վարդապետը ծնուել է Հալէպում, ուր իր գողութիւնների մասին իմացուելով, մահապատժից ազատուելու համար փախել է Պոլիս, ուր շատերի կողմից ճանաչուելով եւ նոր պատժից ազատուելու համար անցել է Դանցիք (Dancica), ապրել է լուսեւրական կենսակերպով, յորդորելով իր ազգակիցներին իրեն հետեւելու: Լեհաստանից իր նկարագրի պատճառով վնասուել է, նոյնը

ուղեկորուելու համար: 3) Թուրքերէն իմանալով, որոշ թուրքերի ստիպել է վճարել, որպէսզի նրանց պաշտպանի Հինգ Իմաստունների ատեանում: 4) Հայոց գլխաւոր՝ Չելեպու խօսքերի համաձայն՝ Թովմաս վարդապետը իր հազարաւոր չարութիւնների համար ազգի կողմից վռնդուել է Լիվոնոյից, իսկ Վենետիկում բոլորից լսել է, թէ նոյն պատճառով փախել էր Հալէպից: 5) Ծոմերը պահել-չպահելու հարցի վերաբերեալ չի կարող վկայել անտեղեակութեան պատճառով: 6) Հայերէն լեզուին անտեղեակ լինելով չի կարող վկայել Թովմաս վարդապետի ունեցած վկայականների վաւերականութիւնը: 7) Վկայում է, թէ անտեղեակ է, որ Թովմաս վարդապետը պատարագի ժամանակ ազգակիցներին բանադրած լինէր: Գրութիւնը աւարտուում է "Io Simon Pincini affermo quanto di sopra" («վկայում եմ վերեւում ասուածին»):

Բ. Երկրորդ վկայութիւն տուողը երեսնամեայ խոջա Սէֆէր Սահին (ջնջուած է վերջին բառը եւ կողքին գրուած է Candi), իբրեւ հալէպցի հայրենակից Թովմաս վարդապետի: Տուած վկայութիւնները միշտ հակառակ Թովմաս վարդապետի են, խոստովանելով որ այս բոլորը լսել է ուրիշներից: Իբր ականատես վկայում է, թէ Թովմաս վարդապետը վռնդուել է Լիվոնոյից, քանի որ նոյն օրերին ինքը եղելութիւններին ներկայ է եղել եւ թէ Վենետիկում պատարագի ժամանակ դրամական միջոցներով իրեն չօգնելու համար բանադրել է Vulcan հային, Փանոսին ու Աղամալին, որոնցից միայն Աղամալն է ներկայումս Վենետիկում: Իր տուած վկայութեան տակ Սէֆէրը ստորագրում է հետեւեալ կերպով. «ինչ որ եմ ասեր Աստուած վկայ որ ողուզ է. ես մեղաւոր Շահահին ծառայ Աստուծոյ է»:

Գ) Վերոյիշեալ եօթ կէտերի մասին հարցաքննուած երրորդ անձը Հայրապետի որդի Մկրտիչը (Megierdigic q. Arabiet), քառասնամեայ, նախ յայտարարում է, թէ

ինքը ճանաչել է Թովմաս վարդապետին միայն Վենետիկում, ոչ անձնապէս, այլ լուրերով եւ որով կրկնում է նոյն զրպարտութիւնները՝ իբր երրորդ անձից է լսել, մերժելով նրա քահանայութիւնն ու եկեղեցական աստիճաններ ունենալը, քանի որ զուրկ է իրեն ձեռնադրող եպիսկոպոսի վկայականներից: Մկրտիչն իր վկայութիւնը ստորագրում է. «Ես Մի[կիր]տիճս վկայ եմ Աստուծոյ խմար, ես գիրս ազորդ այ»:

Դ) 1650 թ. յունուար 24-ին հարցաքննուում է մի իտալացի քահանայ, Rev. P. Michael Barbieri Siracusanus անունով, 44 տարեկան, որ նախ յայտարարում է, թէ հրաւիրուել է Վենետիկի պատրիարքի կողմից, առանց պատճառն իմանալու, գուշակելով, թէ հաւանաբար սեւ երկար մօրուքով «վարդապետի» հետ հայերի ունեցած վէճի համար է: Լ. Միքայէլի տուած վկայութեան համաձայն, ճանաչել է Թովմաս վարդապետին, երբ սա Վենետիկ հասաւ, ընկերացել է իրեն Վենետիկի առաքելական նուիրակի մօտ, տեսել է նրա ունեցած վկայականները, տրուած Հռոմի Սրբաքննութեան ժողովից, ուր Թովմասը կոչուում է «պատրիարք», տեսել է զանազան իշխանների տուած վկայականները, Հռոմի Հաւատաստիւնի նախագահ կարդինալ Barberino-ից տրուածը, որ նրան կարգում է որպէս միսիոներ: Վկայում է, որ երբէք չի տեսել նրա լատիներէն լեզուով պատարագելը, քանի որ լեզուն էլ չգիտի, սակայն անպարկեշտ խօսքերի համար դիտողութիւններ է արել Թովմաս վարդապետին: Բացայայտ կերպով մերժում է, թէ Թովմաս վարդապետը կամովին հետեւում է երկու ծէսի, քանի որ իր ներկայութեամբ միշտ հետեւել է Հռոմէական եկեղեցու ծոմերին եւ Հաւատաստիւնի ժողովի հրահանգներին:

Ե) 1650 թ. յունուար 26-ին հարցաքննուում է 22 տարեկան Մարկոս Աղամալը, որը սկզբում յայտարարում է «եկել

եմ վկայելու ի սէր մի հայ եպիսկոպոս վարդապետի»: Եւ իրապէս վկայում է, թէ շատ անգամ սեղանակից է եղել Թովմաս վարդապետին, որ «հայերի համար ասում է, թէ լաւ քրիստոնեաներ չեն, այլ լութերականներ, որովհետեւ հայերը պահքի օրերին չեն ուտում ոչ ձուկ, ոչ պանիր, մինչդեռ ինքն ուտում էր ամէն բան: Թովմաս վարդապետը պատարագել է միայն հայերէն, սակայն նկարագրով կռուազան լինելով պաշտպանում էր նոյնիսկ թուրքերին՝ քրիստոնեային հակառակ: Նոյն կռուազան բնաւորութեան համար վտարուել էր Լիվոնոյից, ինչպէս վկայում է այս յայտարարութիւնը Լիվոնոյի հայերի կողմից գրուած եւ կնքուած: Վկայում է նաեւ, թէ իր ներկայութեամբ պատարագի ընթացքում բանադրել է երեք հայերի, որոնք մերժել էին իրեն օգնել դրամական կերպով»: Տուած վկայութեան տակ ստորագրում է. «Ես Աղամալս վկայ եմ էս օր ասացի», «Ես Աղամալս օր ինչ աւր ասացել ամ ողչ ազորդ այ, վկայ ամ»:

Զ) 1650 թ. յունուար 29-ին, վկայութիւն է տալիս քառասնամեայ Յովհաննէսի որդի Սիմոնը, Վենետիկում քսան տարի վաճառականութեամբ զբաղուած, եւ վկայում է, թէ չի տեսել ու ճանաչել Թովմաս վարդապետին, այլ միայն լսել է նրա մասին՝ աննպաստ լուրեր: Ստորագրել է. «Էս Սիմոնն ինչ խապարի ասացի»:

Է) Աւետիք, որդի Յակոբի, քառասնամեայ, վկայում է միայն, թէ շուրջ մի տարի առաջ Լիվոնոյում գտնուած շրջանում դքսի կողմից եղել է վճիռ մի վարդապետի հակառակ, որ փախել էր Հռոմ (!) եւ ապա զնացել Վենետիկ: Ստորագրել է «Ես Աւետիկ ինչ որ հաբարի ասի»:

Ը) 1650 թ. յունուար 31-ին, իտալացի 52 տարեկան Դանիէլ, որդի Յրանչիսկոսի (Daniel de Franciscus), ջանում է խուսափողական պատասխաններով վկայել, թէ միայն վատ լուրեր է լսել նրա մասին, իսկ

անձնապէս միայն մէկ անգամ է տեսել՝ հրապարակում եւ հայերից իմացել է՝ թէ եպիսկոպոս է:

Թ) 1650 թ. փետրուար 4-ին 36-ամեայ իտալացի Յովհաննէս Բատտիրամէն (Joannes Battirame), վկայում է, թէ երեք ամիս է, որ Թովմաս վարդապետը բնակուում է իր մօտ եւ միայն հայերից եւ ոչ թէ Թովմաս վարդապետից է լսել նրա «պանրիարք» լինելը եւ թէ նա պատարագում է միայն հայերէն լեզուով: Վկայում է, թէ Թովմաս վարդապետը միշտ պարկեշտ կեանք է վարել եւ երբեւէ գայթակղութեան առիթ չի տուել կամ տարակոյս չի պատճառել նոյն յարկում բնակուող անձանց: Թովմաս վարդապետի նկատմամբ ունեցած վէճերի մասին վկայում է. «Գիտեմ, որ ամէն առաւօտ գնում է պալատ եւ վիճում է մի շարք սանսէրների հետ, այսինքն Zorzi Cochiglio-ի եւ Giacomo Bocaletti-ի հետ եկեղեցու խնդրով, որովհետեւ Թովմաս վարդապետը պնդում է, թէ ինքը իրաւասութիւններ ունի Վենետիկի Հայոց եկեղեցու վրայ, իսկ նրանք իրեն չեն զիջում, որովհետեւ այլ անգամներ տարբեր անձանցից խաբուած լինելով, պակասել են եկեղեցու սպասները: Նմանապէս վիճում էր Պետրոս Հայի հետ, որի տունն էր վարձել իմ մօտ գալուց առաջ»: Ապա կրկնում է երկու հայ սանսէրներից լսած ամբաստանութիւններն ու մեղադրանքները:

Թովմաս վարդապետի բողոքը

Վկաների հարցաքննութեան շարքը դեռ չէր աւարտուել, երբ Թովմաս վարդապետը իմանալով իր դէմ պատրաստուած դաւը, այն է կանխակայել իրեն եւ ընդմիշտ հեռացնել Ս. Խաչ եկեղեցուց, դիմում է բարձրագոյն ատեանին (Citra), որ Վենետիկի դոժից յետոյ գերագոյն ատեանն էր այրիների եւ աղքատների պաշտպանութեան համար: Թովմաս վարդապետի իտալերէն գրութիւնը կրում է 1650 թ. փետ-

րուարի 3-ի ամսաթիւը, բողոքագիր է Յակոբի (որդի Սահակի) դէմ, որ անարդար եւ անխիղճ կերպով հալածում է իրեն, իր Վենետիկ ոտքը դնելու օրուանից սկսեալ, ջանալով սուտ վկաներով իրեն բանտարկել տալ եւ ընդմիջտ իրեն հեռացնել Վենետիկից. «ես, որ միշտ ապրել եմ քահանային վայել բարձրութեամբ եւ բոլորից ճանաչուած եմ իբր անմեղ, երբեք չեմ եղել կանխակայութեան ենթակայ, յայտնի է որ սա իմ դէմ խաբէութիւններ է հնարում»:

Նոյն գրութեան մէջ Յակոբի կողքին յիշում է նաեւ Չաքարիա Մէֆէր եւ Սիմոն զոյգ վաճառականները, որոնք տեսնելով թէ Թովմաս վարդապետն օգնում է *Martino Valigginio*-ին, բանտարկուած Չաքարիայի պնդումով, կատաղած են իր դէմ եւ խաբէութեամբ ուզում են իրեն հեռացնել քաղաքից. «իմ հակառակորդներն փաստաբանը պատճառ բերեց, թէ ես գրաւելով Հայոց հիւրանոցը եւ Ս. Նաչի մէջ մատակարարելով ս. խորհուրդները, հաճելի չէր իրենց, որ այդպէս շարունակուի, ու իմ դէմ վճիռ է եղել 1650 թ. յունուար 14-ին եւ մի շարք հայեր սուտ գրութիւններով պնդում են, որ ես թողնեմ Հայոց հիւրանոցը, ուր տեղաւորուած եմ եւ չմիջամտեմ եկեղեցու հարցերին: Իմ հակառակորդներս պիտի իմանան, որ ազգի պնդումով է, որ ես այս եկեղեցում մատակարարում եմ ս. խորհուրդները: Հիւրանոցի նկատմամբ հիմնուած լինելով աղքատների համար, ես իբր ամենաաղքատ եւ իբր հայ քահանայ համարձակուեցի բնակուել այնտեղ, ինչպէս միւս հայ աղքատները: Ուստի չեմ կարող հանդուրժել հակառակորդների անարդար գրպարութիւնները: Իմ առաքելութեան մեկնելու նկատմամբ ասեմ որ ուզում եմ այս քաղաքում իրագործել եւ երկրորդ տեղի աղքայինները իրաւասու չեն ինձ քաղաքիս հեռացնել, որոշ ժամանակ ես պէտք է մնամ այս քաղաքում տպելու համար եկեղեցու համար շատ կարեւոր սրբազան գրքեր, որոնց համար ար-

դէն իսկ հրաման եմ ստացել սրբաքննութեան ժողովից»:

Թոմաս վարդապետը շարունակում է պնդել թէ եկեղեցին եւ հայոց հիւրանոցը հաստատուած են կաթողիկէ հայերի համար (*estate eretta per Armeni Cattolici*), եւ ոչ կաթողիկէ անձինք իշխանութիւն չունեն եկեղեցու վրայ, ուր դեռ մատուցւում են լատիններէն լեզուով պատարագներ, եւ ճոխացուել է քահանայապետների ներդրութիւններով: Այս բոլորին որպէս եզրակացութիւն՝ ինքը պէտք է մնայ հայոց հիւրանոցում եւ շարունակի մատակարարել ս. խորհուրդները⁸¹:

Աղքատախնամ ատեանի վճիռը

Վենետիկի պատրիարքի կողմից կատարուած վկաների հարցաքննութիւնները եւ նրանց գրաւոր յայտարարութիւնները, ինչպէս նաեւ քաղաքական ատեանին եղած բողոքագրերը ընդդէմ Թովմաս վարդապետի քննուած են Աղքատախնամ ատեանի կողմից եւ 1650 թ. փետրուար 27-ին ընդունուած է վերջնական վճիռը:




Այն է՝ Թովմաս վարդապետը պէտք է լքի հայոց հիւրանոցը եւ եկեղեցին. «*sia D. Tomaso Vartabiet licenziato dalla Chiesa e Ospizio delli Armeni*» ու թոյլ տրուի, որ հայերն իրենց համար ազատօրէն ընտրեն քահանայ, որպէսզի ներկայացնեն եւ այն վաւերացնի Վենետիկի պատրիարքը:

Թովմաս վարդապետը պարտաւոր էր հետեւել դատական ատեանի որոշմանը, սակայն մի տարի յետոյ 1651 թ. մայիսի 29-ին դարձեալ բողոքագիր է ներկայացնում ընդդէմ Չաքարիա Մէֆէրի, Յակոբի (որդի Սահակի) եւ նրա Պօղոս որդու, որոնք չբաւարարուելով իրեն հայոց տնից եւ եկեղեցուց դուրս դնելով, իբր հերետիկոս եւ հաւատուրաց, բանադրանք եւս բե-

81 Ս. Ղազար, Հ. Ղեւոնդ Այլիշանի հուարածոյ:

րել են տուել մի ամուսնացեալ եպիսկոպոսից (*da Prelatto donmato*) եւ Չաքարիան այն կարգալ է տուել եկեղեցում, թէ բա-

նադրուած են նաեւ բոլոր նրանք որոնք այսուհետեւ կը խօսեն կամ յարաբերութիւններ կունենան իր հետ: Թովմաս վար-



դպետը այս եղած անարդարութեան դէմ կրկին բողոքելով խնդրում է որ հարցը խորապէս քննուի եւ պատժուեն վերոյիշեալ յանցաւորները: Այս գրութեան տակ իբրեւ համակիրներ կամ վկաներ ստորագրել են "Martino Valaggian, Mencon Ovan, Giorgio, Hermi Zuan, Giacoleo, Zaffer, Parli, Milidon, Baghadur, Murat"⁸²: Իսկ գրութեան կողքին՝ "Presentate dal infrascritto R.do D. Tomaso Vartabiet vescovo Armeno":

Թովմաս վարդապետի ինքնապաշտպանութիւնը

Թովմաս վարդապետը թէեւ դուրս է գրուում Հայոց հիւրանոցից ու եկեղեցուց, սակայն չի դադարում վերադարձի փորձեր անելուց: Այս նպատակով չի խորշում փորձել ամէն տեսակի երկրորդական ճանապարհներ, այն է՝ գործակցել արդարութեան հետ ցոյց տալով Վենետիկի «հերձուածող» հայերի ապօրինի գործերը, ինչ որ կերպով արդարացնելու իրեն իբր կաթողիկէ եւ շահելու քաղաքական ատեանի համակրանքը: Թովմաս վարդապետը սրբաքննութեան ատեանին յայտնում է, թէ Վենետիկի մի շարք հայեր, վաճառականութեանը զուգահեռ, Վենետիկի մանուկներ են հետները տանում Արեւելք ծառայութիւններ մատուցելու կամ թուրքերին ծախելու համար: Յայտնում է նաեւ այդ հայերի անունները. «Ելիկ (Elich), որ նշանակում է Եղիա, Հայ վաճառական եւ բնակուում է S. Maria Formosa»: Մէկ ուրիշը, Գալուստ (Calust), որ բնակուում է Cale del Rimedio եւ որի հետ բնակուում է Յովհաննէսը (Gio.), «որ նոյնպէս Հայ վաճառական է», Լուկան (Lucano - Ուլուխան), Օհան (Oan), «որ նշանակում է Յովհաննէս, Հայ վաճառական», Cracais (Գարազազ կամ Կիրակոս) «որ բնակուում է Ponte dall Angelo, Հայ վաճառական»:

82 Ա. Ղազար, Հ. Ղեւոնդ Ալիշանի հուաքածոյ:

Այս անունները թուարկելուց յետոյ Թովմաս վարդապետն անցնում է մանրամասնելու թէ «Լուգան կոչուածը, որ գլխաւորն է, միւսներին միացած, Վենետիկից տարաւ երկու երիտասարդներ, որոնցից մէկի անունը Հենրիկոս (Enrico) է, ազգանունանը ծանօթ չեմ, իսկ երկրորդի անունը չգիտեմ, սրանցից մէկը չորս տարի առաջ եւ միւսը՝ երեք տարի առաջ տարուել էին եւ երկուսից մէկը տրուել էր Կ.Պոլսի մաքսատան մէջ աշխատող մի Հայ հերետիկոսի, որի եղբայրը Մեծ Սինեորի (իմա թագաւորի) բարեկամն էր: Երկրորդ երիտասարդը Վենետիկ չգարձաւ»:

Թովմաս վարդապետը մի առ մի թուարկում է Հայոց արածները, երեքը չմուսնալով շեշտել նրանց «հերձուածող ու հերետիկոս» (Armeni scismatici et heretici) լինելը: Այսպէս՝ թէ Կիրակոսը (Cracais) իր մօտ (բնակուում էր S. Giovanni Paolo) պահում էր մի մուրացիկի 16-17 տարեկան Carlo անունով զաւակը, որ փախել էր իր տիրոջ մօտից, որովհետեւ Կիրակոսը ուզել էր թուրքական ձեռով կտրել իր մազերը, ուրացնել քրիստոնէական հաւատը եւ արգելուած օրերին միս կերցնել: Կամ թէ Թովմաս Ոսկան (Tomaso T'Oscono), Հայոց սանսէրը եւ վաճառականը մօտն էր պահում Կարոլոսի քրոջը. թէ 7-8 օր առաջ Թասելի (Tasseli) «Հայ վաճառականը» 14 տարեկան Giacomo անունով վենետիկցի մի երիտասարդի, եօթ-ութ ամիս տանը պահելուց յետոյ, մազերը խուզելով, Հայկական տարազ հագցնելով Fortuna կոչուած նաւով մեկնեց Արեւելք, շատ հաւանաբար հաւատքը ուրացնել տալու կամ նման նպատակների համար. թէ մի տարի առաջ, Ճիերնազար (Giernazar) եւ մի ուրիշ Հայ «բոլորն էլ հերետիկոս» (tutti heretici), նաւով տարել են երեք-չորս վենետիկցիների զաւակներ եւ Ռազուզայի մօտ նաւն ընկղմուելով բոլորը զոհուել էին: Այս բոլորի եզրակացութիւնն է՝ «այսպէս կանոնաւոր կերպով, ամէն անգամ, որ նաւը մեկնում է,


7-8 մանուկներ տարուում են այս հերետիկոս հայերի կողմից»:

Թովմաս վարդապետը շարունակում է մանրամասնութիւններ հաղորդել, թէ երկու շաբաթ է, ինչ Եղիայի տանը գտնուում է մի մանուկ, նուէր Թովմաս Ոսկանից՝ սանսէրական մաքուր զգեստի փոխարէն: Յովհաննէսը ստացել է Հայ սանսէր Յովսէփ Տէր Գրիգորեանից (Giuseppe Don Gregorio), 11 տարեկան մի մանուկ, որ Յովհաննէսի տանն է ապրում, ածիլուած գլխով եւ Հայկական տարազով: Յովհաննէսը խոստովանել է, թէ ուզում է տղան «հետը Հայաստան տանել, ամուսնացնելու եւ իրենց աղանդին (setta) քահանայ ձեռնադրել տալու»: Զիոնամիրը (Gionamir) եւ Գալուստը միասին ունեն 12 եւ 15 տարեկան մանուկներ. նախկինում Զիոնամիրը Արեւելք էր տարել մի մանուկի, որ ճանապարհին նաւը խորտակուելով՝ գերի էին ընկել թուրքերի ձեռքը, տէրն ազատուել էր իսկ մանուկը մնացել էր թուրքերի մօտ:

Հաստատելու համար իր ասածները, Թովմաս վարդապետը վկայակոչում է Մեծ Հայքից (Armenia Maggiore) հասած մի Հայ դոմինիկեանի (իմա Նախիջեւանից), որ տեսել էր Հայ վաճառականների կողմից թուրքերին ծախուած մի մանկան, խաչի վրայ, որից ազատուել էր ուրանալով հաւատքը եւ երկրորդ՝ Յովհաննէս Մկրտիչ Բովիս (Giovanni Battista Bovis⁸³) թուրքերի թարգմանիչը, որ «իբր լաւ կաթողիկէ» բազմիցս սպառնացել է հայերին: Իսկ ինքը՝ Թովմաս վարդապետը, ցարդ այս բոլորը չի բարձրաձայնել «վախենալով հայերից, որ իրեն կարող են սպանել, որովհետեւ նրանք թուրքերից աւելի թշնամի են կաթողիկէներ»:

83 Իմա՝ Վենետիկում թուրքերէնի եւ հայերէնի թարգմանիչ Յովհաննէս Մկրտիչ Բովիս: Աւելի ուշ, 1660 թ., նրա հիմնած տպարանում լոյս տեսան երկու հայերէն գրքեր՝ Ծնորհալու «Յիսուս որդի»-ն եւ Սաղմոսարանը (նկարագրութիւնը տե՛ս Ն. Ա. Ոսկանեան, Ք. Ա. Կորկոտեան, Ա. Մ. Սաւալեան, Հայ գիրքը..., էջ 34-35):

րին»: Գրութիւնը ստորագրում է. «Ես Թովմաս վարդապետ վկայեցի. բաւ է»:



Այլ մանրամասնութիւնների չենք անդրադառնում մեր նիւթից չչեղուելու համար: Սակայն հարկ ենք համարում նկատել, թէ Սրբաքննութեան ժողովը իբր վկայ այս նիւթի շուրջ հարցաքննում է նաեւ Թովմաս վարդապետի 29-ամեայ փոքրաւորին՝ Միլիտոն սարկաւազին, Հայոց եւ թուրքերէնի թարգման 53-ամեայ իտալացի Պովիսին, 60-ամեայ Հայ դոմինիկեան «Պատրի Փրա Յակոբ Յիսուսի», նմանապէս նաեւ Հայ դոմինիկեան Փրա Գրիգոր Ծործորեցուն եւ աւելորդ է ասել, որ բոլորն էլ իրենց հերթին հաղորդում են հետաքրքրական մանրամասնութիւններ, որոնց եզրակացութիւնը լինում է այն, որ Սրբաքննութեան ժողովի 1653 թ. ապրիլի 3-ին վճռով ձերբակալուում եւ բանտ է դրուում Թովմաս Ոսկան Հայ սանսէրը⁸⁴:

84 Տե՛ս Archivio di Stato di Venezia, Santo Offizio, busta 105. Թովմաս վարդապետի այս վկայութեանը՝ Վենետիկցի մանուկներին Արեւելք տանելու եւ վաճառելու մասին հպանցիկ եւ իբր արդէն ապացուցուած փաստ անդրադարձել է Աւետ Ն. Ռոտմանը (Հմմտ. E. Natalie Rothman, Brokering empire: trans-imperial subjects between Venice and Istanbul, Cornell University Press, First printing, Cornell Paperbacks, 2014, p. 234: Ծնորհալուութիւն ենք յայտնում պրոֆ. Սեպուհ Աւլանեանին

Թոմաս վարդապետի դիրքը Վենետիկի
Առի հովիւ Տէր Սահակի հաճախ

Վերեւում տեսանք, որ Թոմաս վարդապետը 1650 թ. վճռով ստիպուեց թողնել Վենետիկի Հայոց հիւրանոցը եւ ս. Խաչ եկեղեցին ու հրաման տրուեց, որ Հայերը կարողանան ընտրութիւն կատարել եւ որոշել իրենց հովուին: Մինչ այդ կնքուեց է ս. Խաչ եկեղեցին եւ նրա սպասքը: Հաւանորէն այս ընտրութիւնը կատարուել է ի դէմս տէր Սահակ Ղասապի եւ Հաստատութեան Համար դիմում է եղել էջմիածին: Փիլիպոս կաթողիկոսը 1652 թ. օգոստոսի 15-ի կոնդակով իբր Վենետիկի Հայոց հովիւ Հաստատում է տէր Սահակին, նոյն կոնդակով մերժելով բոլոր նրանց, ովքեր առանց իր կնիքի կը ներկայանան որպէս ազգի հովիւ:

Տէր Սահակը, առանց քաղաքի լատին պատրիարքի հաւանութեան, միայն կաթողիկոսական կոնդակով չէր կարող սկսել պաշտօնավարումը: Թոմաս վարդապետը, ով ակնդէտ հետեւում էր դէպքերին, 1653 թ. մայիսի 27-ին Սրբաքննութեան ատենանին է ներկայացնում գրաւոր խնդրագիր, տեղեկացնելով թէ «Հայերը Պոլսից բերել են տուել հերձուածող ծէսով մի քահանայ (un Prete di Ritto scismatico), Վենետիկ ուղարկուած Պարսկաստանի իրենց կաթողիկոսից (Patriarca di Persia): Քահանան առանց հրամանի եւ առանց կաթողիկէ Հաւատքի դաւանութիւն անելու, երեք անգամ իրենց ծէսով պատարագեց Հին Նազարէթում (Lazaretto Vecchio) եւ ներկայումս Հայերը իրեն տեղաւորեցին ս. Խաչին նուիրուած Հայոց եկեղեցում (nella Chiesa de gli Armeni ad S. Giuliano dedicata al home della m.a Croce), օծուած կաթողիկէ կերպով եւ օծուած պապական ներողութիւններով (d'indulgenze): Նոյն եկեղեցում նպատակ ունի պատարագելու եւ

խորհուրդներ մատակարարելու՝ վերոյիշեալ դատապարտեալը՝ հռոմէական սուրբ եկեղեցուն»⁸⁵:

Վենետիկահայերը պատրաստում են մի պաշտօնական խնդրագիր, գրուած նոտարի գրչով, Հայոց պաշտօնական թարգման իտալացի Յովհաննէս Բովիսի թարգմանութեամբ, թէ ուզում են իրենց հովիւ տեսնել տէր Սահակ Ղասապին, ուղարկուած Փիլիպոս կաթողիկոսի կողմից: Խնդրագիրը ստորագրում են 73 հայեր, մեծամասամբ շուղայեցիներ: Հայոց խնդիրն այն էր, որ տէր Սահակը չէր կարող սկսել հոգեւոր պաշտօնը առանց Վենետիկի պատրիարքի հաւանութեան եւ սա էլ իր հերթին չէր կարող ընդունել Փիլիպոս կաթողիկոսի վկայականը, քանի որ վերջինս Հռոմի աթոռի հետ հաղորդակցութեան մէջ չէր: Այս կացութիւնից էր ուզում օգտուել Թոմաս վարդապետը, որ 1653 թ. յուլիսի 4-ին դիմում է բարձրագոյն ատենանին, խնդրագիր ներկայացնելով թէ «ես Թոմաս վարդապետ, Հայ կաթողիկէ քահանայ», փափագելով Հայոց մէջ տարածել կաթողիկէ վարդապետութիւնը, գնացել էի Հռոմ եւ ս. ժողովից սահմանուել էի թրքահայոց միսիոներ: Ծանօթ պատերազմի [իմա՝ Կանդիայի պատերազմի – Մ. Կ.] պատճառով մնացել էի Վենետիկում եւ Հաւատաստիւնի ժողովի հաւանութեամբ նշանակուել էի հովիւ, որպէսզի այստեղ քաղաքում «ուր հերձուածող ծէսով բազմաթիւ հայեր են գտնուում, առաջնորդեմ կաթողիկէութեան, ինչպէս շատերին դարձի բերի»: Ապա շարունակում է ներկայացնել թէ սկզբնական շրջանում արդիւնաւէտ է գործել, պատարագելով ս. Խաչում, ապա խոռվութիւնների հետեւանքով ստիպուած է եղել դադարեցնել: Այժմ խնդրում է կրկին սկսել իր առաքելութիւնը, քանի որ ունէր կարգինալ Pamphilo-ի

85 St'u Archivio di Stato di Venezia, Santo Offizio, busta 105.

այս աշխատանքի վրայ մեր ուշադրութիւնը հրաւիրելու համար):

նամակը, ուր իրեն իշխանութիւն էր տրուում մատակարարելու ս. խորհուրդները:

Վենետիկի Ծերակոյտը հարցը քննելու համար այն փոխանցում է քաղաքական հոգաբարձուներին: Քաղաքական հոգաբարձութիւնը մատնուում է դժուարութեան, ուստի դիմում է դուքսին, վերջնական վճիռ ստանալու համար. 1653 թ. յուլիսի 30-ին ներկայացնում է իր խնդիրը, պարզաբանելով հարցի էութիւնը եւ իր կողմից թելադրում է նաեւ թէ՛ Վենետիկը Հռոմին ենթակայ չլինելով, պարտաւորութիւն չունէր ճանաչելու Թոմաս վարդապետի ունեցած վկայականները, իսկ քաղաքը ապրելով գլխաւորապէս վաճառականութեամբ, լաւագոյնը կը լինէր ընդունել Հայոց առաջարկը, այն է՝ տէր Սահակը իբր «իրենց հոգիների մխիթարիչ»:

Դուքսն իր կարգին հարցը յանձնում է երկու մասնագէտների՝ Fra Fulgentio de Servi և Gaspare Lonigo-ին, որոնք 1653 թ. օգոստոս 25-ին երկար տեղեկանք են ներկայացնում, որի եզրակացութիւնն է, թէ չարժի հարցը այդքան բարդացնել, երբ 400 տարուց մինչ օրս հայերը միշտ գործել են այս կերպով, այն է՝ իրենց ծէսի մէջ տարբերութիւններ ունենալով հանդերձ, խորքում միշտ եղել են բարեպաշտ կաթողիկէներ անկախ քաղաքի պատրիարքից, եւ միայն մի Թոմաս վարդապետի պատճառով է, որ առաջին անգամ լինելով ծայր են առել նման բարդութիւններ, որի հետեւանքով մի շարք հայեր հեռացել են քաղաքից եւ ուրիշներն էլ պատրաստուում են հեռանալու:

1653 թ. օգոստոսի 29-ի ծերակոյտի որոշմամբ, որ է քաղաքի հոգաբարձութիւնը առանց վարանելու եկեղեցին պէտք է յանձնէր իր սպասաւորին՝ տէր Սահակին, որպէսզի նախկին աւանդութեամբ շարունակուի Հայկական կեանքը:

Ստորեւ մեջբերենք երեք Հայերէն իշխատակարաններ, որոնք այս կամ այն չափով լուսաբանում եւ ամբողջացնում են իշխալ օրերի անցուղարձը:

1. Հ. Ղեւոնդ Ալիշանը իր ձեռագիր «Հայկարան» բազմահատոր ժողովածոյում ընդօրինակել է «Յիշատակարան նուիրատուաց ի ս. Խաչ եկեղեցի Վենետիկ» 1652 թ. շարադրած գրութիւնը, ուր թուարկուում է Վենետիկի Հայ վաճառականների նոյն եկեղեցուն յղած նուէրների ցանկը: Այդ ցանկը սկսելուց առաջ, տալիս է նոյն օրերին ազգային խոռվութիւնների պատկերը, առանց յիշելու Թոմաս վարդապետի անունը: Այսպէս.

«Արդ, ի թուահաշուութեանս Հայագուն սեռի հազարերորդի, հարիւրերորդի եւ թիւ մի յարաբարթի (1101+551=1652) երջանիկ եւ երիցս երանեալ հայրն հանուրց, որ եղեւ կրկին լուսաւորիչ ազգիս Հայոց, աստուածաբան հայրապետն տէր Փիլիպոս սրբազան կաթողիկոսն, ելեալ Սուրբ աթոռոյն էջմիածնայ, մեծաւ փափագանօք դէմ եղեալ գնաց ուխտ եւ երկրպագութիւն լուսաբուխ սուրբ գերեզմանին փրկչին մերոյ Յիսուսի, զոր եւ կատարեալ զուխտ իւր, մեծաւ հանդիսիւ եւ կարի ամբոխիւ, հանդերձ աշակերտօք, յոյով վարդապետօք եւ բազում եպիսկոպոսօք եկն յարքայանիստ եւ մեծահրչակ մայրաքաղաքն Կոստանդին[ու]պոլիս: Եւ ժամանակին յայնմ էին խաբիբայք ի տունս յարեւմտեան, որք երեւելօք ձեւացեալ էին կարգաւոր, բայց ի ներքոյ էին գայլք յափշտակօղք, որք տիրեալ էին այս սուրբ անուն եկեղեցոյս Երեւման Խաչ, որ է վիճակ ազգիս մերոյ Հայոց, անուղղա գնացիւք շրջէին եւ խայտառակ վարուք ուտէին եւ ըմպէին, զոր ոչ էր կարգ քրիստոնէից, զսեղան սուրբ եկեղեցոյս կողպատէին, զգեստն եւ զանօթն վաճառէին, որոց համբաւ չարութեան եւ աղաղակ հերձուածութեան հնչեաց ի լսելիս երջանիկ Հայրապետին մեր տեառն Փիլի-

պոս կաթողիկոսի: Եւ սուրբ Հայրապետն իսկոյն եւ վաղվաղակի չարաչար բանադրեաց զհերձուածքն այն, եւ նոքա աստ եւ անդ անկանելով, եւս քան զեւս չարացան, եւ կարի որումն եւ չարիք սերմանեցին ընդ ազգիս մերոյ, մինչեւ զեկեղեցիս մեր եւս ետուն փակել: Իսկ ի խնդրոյ մերոյ ազգաց վաճառականաց սրբազան Հայրապետն մեր առաքեաց զտէր Սահակն իւրով բարձր հրամանաւ եւ թղթով վասն քահանայազորութիւն առնելոյ. եւ նա եկեալ ի Վէնետիկ, եզիտ զեկեղեցին փակեալ, վասն որոյ ջանս եղեալ ընդ վաճառականաց, բազում նեղութիւն եւ վիշտ կրեցին մինչեւ բացին զեկեղեցին, եւ վերստին նորոգեցին զսա եւ պայծառացուցին զեղծեալն կարգ, եւ Հաստատեցին զժամակարգութիւն, զպաշտօն եւ զպատարագն»⁸⁶:

2. Ս. Ղազարի մատենադարանի թիւ 1392 ձեռագիր աւետարանի յիշատակարաններէից մէկում, գրուած Սահակ երէց թոխաթեցու ձեռքով, ակնարկուում է թոմաս վարդապետի խոռվութիւնների մասին.

«Արդ՝ ես նուաստս եւ ստրուկս ամենայնի Սահակ երէցս, հրամանաւ երջանիկ Հայրապետին մերոյ տեառն Փիլիպպոսի սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց կացի ի Վենետիկ երեք ամ եւ վեց ամիս առ ի քահանայազորութիւն Հայոց վաճառականաց եւ սպասաւորութիւն Երեւման խաչ եկեղեցոյս. որ եւ վասն եկեղեցոյս՝ բազում նեղութիւն եւ վիշտս կրեցաք ի ձեռն սուտ եւ խաբեփա հերձուածողի

միոյ. վերջն ամօթալից եւ փախտական կորեաւ. վասն որոշ աղաչեմ յիշել զթօխաթեցի Սահակ երէցս, որ փոքր ինչ պատճառ եղէ ի գնելն սուրբ Աւետարանիս»⁸⁷:

3. Նոյն օրերին (Հաւանաբար գրուած է 1655 թ.) Անտոն դպրի անունով մի Հայազգի վաճառական Ս. Խաչ եկեղեցու համար օրինակելով մի Տաղարան, յիշատակում է տէր Սահակի անունը.

«Դարձեալ իշխանութիւն ի սոյն քաղաքիս Վենետիոյ Դոմէնիկօ Կօնթարին դուճին եւ հոգեւոր հօրն մերոյ եւ հովիւ եւ սպասաւոր սուրբ Խաչ եկեղեցոյս թօխաթեցի տէր Սահակին»⁸⁸:

Տէր Սահակ թոխաթեցին 3 տարի Ս. Խաչում պաշտօնավարելուց յետոյ վերադարձաւ Կ.Պոլիս եւ նրան փոխարինեց Առաքել Շոռոթեցու ազգականներից Տէր Վարդանը:⁸⁹

Թոմաս վարդապետը եւ Հաւատաստիլոս ժողովը 1651-1656 թթ.

Վենետիկում թոմաս վարդապետի յարուցած խնդիրների արձագանքը գրեթէ չի լսուում Հռոմում, պատճառը հաւանաբար Վենետիկի անկախ ու ինքնավար գործունէութիւնն էր: 1651 թ. փետրուար 20-ին, երբ առաջին բախումները հանգուցալուծուել էին, թոմաս վարդապետը պատրաստում է 5 կէտից բաղկացած մի յայտարարութիւն, թէ ինքը Վենետիկ է հասել 1648


86 St' u Archivio di Stato di Venezia, Procuratori di San Marco, misti, busta 180, fasc. 3: Հմմտ. Ղ. Ալիշան, Հայկարան, հտ. Ը, էջ 975-976: Վերջերս Վենետիկի եւ Չմմտիի հետագայ արտագրութեան տեքստերը հրատարակուեցին (տե՛ս Գեորգ Տէր-Վարդանեան, Վենետիկի հայոց ս. Խաչ եկեղեցու ընծայամատեանը, - «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 70-71): Հրատարակութեան մէջ առանել կարելորում է փաստաթղթի հնագրագիտական ու ձեռագրագիտական նկարագրութիւնը. քան հաղորդում տեղեկութիւնների համատեքստի վերհանումը:

87 Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի միջոցառումն ի Վենետիկ, Հտ. 1, Վենետիկ-Ս. Ղազար, 1914, էջ 726-727:
88 Ղ. Ալիշան, Հայկարան, հտ. Ը, էջ 1070: Հմմտ. Հ. Սահակ Վրդ. Մեմենեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի միջոցառումն ի Վենետիկ: Հտ Ե, Վենետիկ-Ս. Ղազար, 1995, էջ 782:
89 1655-1660 թթ. այս երկու կրօնատրուների միջեւ Ս. Խաչում պաշտօնավարման վեճերի մասին տե՛ս Մերոման Կարապետեան, Առաքել արքեպիսկոպոս Երեւանի եւ Առաքել արքեպիսկոպոս Շոռոթեցի, - «Համդէս ամսօրեայ», 2018, էջ 219-230:

թ. ու Հայոց եկեղեցին գտել էր ոչ կաթողիկէ ամուսնացեալ քահանայ տէր Մկրտիչի (Don Mergadich) ձեռքում եւ Սրբաքննութեան ատեանի ձեռքով հեռացնել է տուել նրան, որի հետեւանքով ծագել են ներքին խռովութիւններ: Իր այս յայտարարութիւնը թոմաս վարդապետը վաւերացնել է տուել վկաներով եւ յանձնել Վենետիկի առաքելական նուիրակին, որն էլ իր կարգին այն ուղարկել էր Հռոմ⁹⁰:

Հռոմում թոմաս վարդապետի համակիր ու պաշտպան մնում էր Կղեմէս Գալանոսը, որ թոմասի կողմից խնդրագիր է շարադրել Հաւատաստիլուի ժողովին, պարզաբանելով կացութիւնը՝ թէ երեք տարի առաջ թոմաս վարդապետը իբրեւ միսիոներ մեկնել է Պոլիս, պատերազմի պատճառով մնացել է Վենետիկում, ուր վարդապետի կարիք կար, քանի որ եկեղեցում կիրարկուում էին աւելորդապաշտութիւններ եւ տարին 2 անգամ նզովում էին Քաղկեդոնի ժողովը եւ ս. Լեւոնը. «Ս. ժողովը որոշեց որ թոմաս վարդապետը մնայ Վենետիկում եւ նա եկեղեցին մաքրեց իր հերետիկոսներից», այժմ խնդրում է երեք տարուայ համար թոշակ եւ հրաման հռոմէական ծէսը հայերէն լեզուով պատարագելու համար⁹¹:

1652 թ. յունիսի 18-ի նիստով Հաւատաստիլուի ժողովը որոշում է Վենետիկի նուիրակի ձեռքով կատարել եռամեայ թոշակի վճարումը, իսկ ունիթորների ձեռով պատարագելու համար՝ սկզբունքօրէն համաձայն է, քանի որ նախկինում նոյն հրամանը ուրիշների համար տրուել է, սակայն վերջնական վճիռը թողնում է Հաւատաքննութեան ժողովին⁹²:



Կայացած որոշումների համաձայն, 1652 թ. յունիսի 28-ին Հաւատաստիլուի ժողովի քարտուղարութեան կողմից թոմաս վարդապետին գրուում է նամակ, թէ ահա ուղարկուում է 60 սկուդ տարեկան թոշակը, որպէսզի նա կարողանայ շարունակել իր առաքելութիւնը, այսինքն «Ս. Աթոռին միացնել ջանաս տեղացի հերձուածող հայերին, որոնք գտնուում են քաղաքում (իմա՛ Վենետիկում)»⁹³: Հաւատաստիլուի նամակը եւ ուղարկուած թոշակը թոմաս վարդապետին է յանձնում Վենետիկի առաքելական նուիրակը (Պիզայի արքեպիսկոպոս), որն էլ տեղեկացնելով այս մասին միաժամանակ աւելացնում է, թէ «թովմաս վարդապետին գտայ շատ լաւ տրամադրութեան մէջ, որ յոգնում է իր ազգակիցներին առաջնորդելով դէպի Աստծոյ ճշմարիտ երկրպագութիւն եւ ինչպէս ասում է՝ վերջերս մի քանի հոգի դարձի է բերել»⁹⁴:

90 St' u SOCG, vol. 292, f. 282-283.
91 St' u SOCG, vol. 292, f. 253.
92 St' u Acta, vol. 21, f. 70, n. 28-29.

93 St' u AP, Lettere volgari, vol. 29, f. 37.
94 St' u SOCG, vol. 292, f. 276.

Թոմաս վարդապետը ս. Խաչ եկեղեցուց վտարուելով, չէր կարող հայոց ծէսով պատարագել. այս պատճառով է, որ Հաւատաստափիւռի ժողովից հրաման է խնդրում եւ կրկին է խնդրում, կարողանալ պատարագել լատին եկեղեցիներում հռոմէական ծէսով բայց հայերէն լեզուով⁹⁵: 1652 թ. յուլիսի 30-ին Հաւատաստափիւռի ժողովը գումարում է պապի ներկայութեամբ, ուր պապը յանձնարարում է պաշտօնեայ D. Alsino-ին քննել խնդիրը եւ եթէ անցեալում որոշում չի եղել, ապա հրաման տալ⁹⁶:

Վենետիկում ունեցած բոլոր խնդիրների ու անհամաձայնութիւնների մասին Թոմաս վարդապետը անցողակի ձեւով է գրում Հաւատաստափիւռի ժողովին: Այսպէս 1652 թ. օգոստոսի 3-ին գրում է թէ հաւատքի համար արիւն չի թափել, սակայն իր ազգից կրածները հաւասարում են ճշմարիտ մարտիրոսութեան, ու խնդրում է Հաւատաստափիւռի ժողովը միջամտի որպէսզի ինքը առաքելական նուիրակի ձեռքով կարողանայ վերստանալ ս. Խաչ եկեղեցին, որ փակուած է եւ գտնուած է հերետիկոսների ձեռքում⁹⁷:

Շուրջ մէկ տարի լուռութիւնից յետոյ, 1653 թ. օգոստոս 23-ին Թոմաս վարդապետը դարձեալ գրում է Հաւատաստափիւռի ժողովին, պարզաբանելով ամբողջ կացութիւնը, միշտ շեշտը դնելով այն կէտին թէ Արարատի կաթողիկոսը Վենետիկ է ուղարկել հերձուածող քահանայ, թէ իր դէմ բանադրանք եւս բերուել է, որ պաշտօնավարել է կաթողիկէ կերպով ս. Խաչում, որն պապերից օժտուել էր ներողութիւններով: Եզրակացնում է, թէ քաղաքական ատեանին ցոյց է տուել Գալանոսի Հռոմում տպուած գրքերը համոզելու համար, թէ հայերը հերետիկոս են, որոնք տեսնելով գրութիւնը զգացուել են, սակայն սպա-

սում են Հաւատաստափիւռի բացայայտ նամակներին, որպէսզի եկեղեցու ղեկավարութիւնը իրեն յանձնեն⁹⁸:

Վենետիկի հայոց հետ ունեցած վէճերի հետեւանքով Թոմաս վարդապետը կարծես թէ բանտարկուած էլ պիտի լինէր: Այս մասին ունենք միայն իր անթուական նամակը, ստորագրուած հայերէն՝ «Թոմաս վարդապետ Հայոց. բաւ էյ», գրուած Հաւատաստափիւռի ժողովին: Խնդրում է դրամական նպաստ, որովհետեւ «սուտ ամբաստանութիւններով ինձ բանտարկել տուին, ուր մնացի ամբողջ մի տարի մնացի մթան մէջ»⁹⁹: Այս նամակը ղեկուցւում է Հաւատաստափիւռի 1655 թ. նիստին եւ որոշում է գրել Վենետիկի առաքելական նուիրակին՝ տեղեկութիւններ ստանալու եւ դրա համաձայն գործելու համար¹⁰⁰: Այլ լրացուցիչ տեղեկութիւններ այս մասին չունենք:

Թոմաս վարդապետի արտաքսումը
Վենետիկից

Իր խռովարար ու կռուական նկարագրով Թոմաս վարդապետը շարունակում էր վրդովել Վենետիկի հայ գաղութի կեանքը, որոնք արդէն յուսահատուած դիմում են Վենետիկի դուքսին, խնդրելով նրա միջամտութիւնը: Վենետիկի հայ գաղութի կողմից շարադրում է մի խնդրագիր, 1655 թ. յուլիսի 20-ով թուագրուած, ուր նաեւ ներկայացւում են անցեալում Վենետիկում հայերի ունեցած բոլոր առանձնաշնորհութիւնները, որոնց շնորհիւ օրեցօր ծաղկել է վաճառականութիւնը քաղաքում եւ որի համար շնորհակալութիւն են յայտնում թէ՛ դուքսին եւ թէ՛ Վենետիկի հանրապետութեանը: Ապա անցնում է հարցի էութեանը, թէ եթե-ուեթ տարի է այս երջանկութիւնը դադարել է

95 St'u SOCG, vol. 292, f. 443.
96 St'u Acta, vol. 21, f. 89, n. 11.
97 St'u SOCG, vol. 292, f. 286.

Թոմաս վարդապետի պատճառով, որ իրեն հայոց պատրիարք անուանելով, նեղում է տեղի հայերին, ոչ միայն կրօնական վէճերով այլ նաեւ քաղաքական խնդիրներով, դիմելով զանազան քաղաքական ատեանների: Նոյն գրութիւնը յայտնում է նաեւ, որ Թոմաս վարդապետը արդարացուած լինելով «Տասի ատեան»-ում, յոխորտալով սպառնում է հայերին վրէժ լուծել անցեալում կրած անարդարութիւնների համար: Այս իրավիճակից յոգնած Վենետիկի հայերը դուքսից խնդրում են Վենետիկից վտարել Թոմաս վարդապետին, ինչպէս վտարել է Տոսկանայի դուքսը Լիվոնոյի սահմաններից ու միայն այս կերպ է որ վաճառականութիւնը կարող է ծաղկել Վենետիկի մէջ: Հակառակ դէպքում հայերը սրտի խոր ցաւով պիտի ստիպուած լինեն հեռանալ քաղաքից, ուրիշ քաղաք տեղափոխելով իրենց գործունէութիւնը¹⁰¹:

Հայոց գրած խնդրագիրը ներկայացւում է փաստաբանական ժողովին, որոնք քննելով հարցը, լսելով երկու կողմերին ի նպաստ եւ հակառակ, 1655 թ. սեպտեմբերի 20-ին դուքսին է ներկայացնում գրաւոր հաշուետուութիւն, ուր նաեւ համառօտ պատկերացում է տրւում նախորդ տարիներին Թոմաս վարդապետի եւ հայերի միջեւ բոլոր անհասկացողութիւնների ու վէճերի, Թոմաս վարդապետի ունեցած յանձնարարական նամակների եւ Հաւատաստափիւռի կողմից թոշակաւորուած միսիոներ լինելու հանգամանքի, ապա ընդարձակ կերպով նկարագրում է հայ վաճառականների ունեցած յաջողութիւնները եւ բացառիկ օգտակարութիւնը Վենետիկին, կապելով այն Արեւելքի, Աղեքսանդրիայի եւ Սիրիային, ու ինչպէս իրենց քաջալերելու համար Վենետիկի ծերակոյտը 1646 թ. մարտի 3-ին եւ 1648 թ. յունուարի 2-ին առանձնաշնորհումներ է տուել, ազատելով մի շարք տուրքերից:

101 Ս. Ղազար, Հ. Ղեռնդ Ալիշանի հուաքսածոյ:

Նոյն հարցը յանձնւում է նաեւ «Հինգ իմաստուններ»-ի ժողովին, որոնք 1655 թ. սեպտեմբերի 24-ին գրաւոր պատասխանում են, ըստ որի չունեն բաւարար պատճառներ քաղաքից արտաքսելու Թոմաս վարդապետին, սակայն աւելացնում են մի գաղափար, որ դուքսի ողջախոհութեանն են յանձնում կարեւորագոյն վճիռը կայացնելը՝ եթէ ուզում է միախառել հայ ազգին, որ իրենց բացառիկ նպաստն են բերում Վենետիկի հանրապետութեան բարգաւաճմանը:

Վենետիկի ծերակոյտը լսելով փաստաբաններին եւ «Հինգ իմաստուններին», 1655 թ. հոկտեմբեր 9-ի որոշմամբ, յանձնարարում է երկու խմբերին՝ կանչել եւ ադարարել Թոմաս վարդապետին չնեղել հայ ժողովրդին, հակառակ դէպքում Պետութիւնը կարող է տարբեր վարուելակերպ ցուցաբերել իր հանդէպ: 1655 թ. նոյեմբեր 17-ին «Հինգ իմաստունները» համառօտ երկտողով տեղեկացնում են Մերակոյտին թէ զործադրել են իրենց տուած հրահանգը, կանչելով եւ ազդարարելով Թոմաս վարդապետին. գրութիւնը ստորագրել են հինգ իմաստունները միասին¹⁰²:

Այս խնդիրների ընթացքում Թոմաս վարդապետը դրամական նպաստի խնդրանքով դիմել էր Հաւատաստափիւռի ժողովին: Հաւատաստափիւռի քարտուղարը օգնելուց առաջ, նախ, 1655 թ. հոկտեմբերի 26-ին գրում է Վենետիկի նուիրակին, լուսաբանութիւններ եւ մանրամասնութիւններ պահանջելով, քանի որ Թոմաս վարդապետը ներկայացրել էր թէ փափագում է շարունակել իր առաքելութիւնը ի նպաստ հայերի դարձի եւ ձեռքին եղած գումարը ծախսել էր իր դէմ եղած անարդար զրպարտութիւնների եւ հալածանքների առաջն առնելու համար, ուստի կարօտ էր

102 St'u Archivio di Stato di Venezia, Cinque Savi, Risposte, b. 155, fol. 62-64.

նոր դրամական օգնություն¹⁰³: Վենետիկի առաքելական նուիրակը՝ Կարլո (Carlo) Եպիսկոպոսը, 1655 թ. դեկտեմբերի 25-ին պատասխանում է գովելով Թոմաս վարդապետի անձը, թէ արդարեւ, հալածում է հայերից, որոնք իրեն նոյնիսկ բանտարկել տուին, եւ փորձեցին քաղաքից վտարել, սակայն յայտնի դարձաւ անմեղութիւնը, կամ արդար լինելը՝ եւ ներկայումս կարօտ է դրամական նպաստի¹⁰⁴: Հաւատասփիւռի ժողովը 1656 թ. յունուար 11-ի նիստով սահմանում է բացառիկ օգնութիւն՝ 50 սկուդի¹⁰⁵, եւ նոյն օրն իսկ գրում է Վենետիկի առաքելական նուիրակին՝ Հաւատասփիւռի տրամադրած գումարից 50 սկուդի փոխանցել Թոմաս վարդապետին, իրեն յանձնարարելով, որ աւելի յաճախակի տեղեկացնի Հռոմի Հաւատասփիւռի ժողովին իր գործունէութեան եւ առաքելական յաջողութիւնների մասին¹⁰⁶:

Թէ Թոմաս վարդապետը ինչ աստիճանի է ոխով լցուած եղել եւ ուզել իր ոխը առնել Վենետիկի հայ վաճառականներից, ձեռնարկելով բացառիկ ու աննախադէպ խորամանկութիւններ, յայտնի է դառնում Կ.Պոլսից գրուած մի նամակից: Նամակագիրը Պոլսի Օսմանեան պետութեան մօտ Վենետիկի հանրապետութեան դեսպանի՝ պալլի երկարամեայ քարտուղարը եւ փաստացի դեսպանը՝ Զիովաննի Բատտիստա Բալարինոն¹⁰⁷, որի 1656 թ. յունուար 17-ի

Վենետիկի ծերակոյտին ուղղուած նամակի բովանդակութիւնը հետեւեալն է.

Պոլսահայութիւնը բողոքում է պալլին այն մեծամեծ վնասների համար, որ կրում է Վենետիկում բնակուող Թոմաս վարդապետից՝ իր ազգի վաճառականների դէմ անհանդուրժող թշնամուց, որոնց դէմ չափազանցելով գրում է Պոլսի արքունիքի նախարարներին, որոնք Թոմաս վարդապետից ստացած լուրերի համաձայն խիստ միջոցներ են ձեռնարկում հայերի դէմ: Մօտ երկու տարի առաջ Թոմաս վարդապետը գրել էր արքունի Դուան Ղլլար Աղային եւ ուրիշ բարձրաստիճան անձերի թէ խոջա Ուլուխան անունով հայ վաճառականը Պոլսից Վենետիկ է փոխադրել սուլթանի մեռած մօր գոհարեղէնը, որոնց մէջ էր յատկապէս մի խոջոր աղամանդ եւ ծախել էր Վենետիկի վաճառականներին: Ուլուխանը շահած գումարով գնել էր անչափ ապրանք Պոլսի փոխադրելու համար եւ անձամբ տեղավորել Pace կոչուած նաւի վրայ: Այս եղելութիւնը պատճառ եղաւ, որ Ղալաթիայի հայոց եկեղեցում ձերբակալուեցին հինգ հայ վաճառականներ, ապա ներկայացուեցին առաջին վեզիր Տերվիչին, վերջում բանտարկուեցին եւ չարչարանքների ենթարկուեցին:

Բացի այս արարքից, նոյն Թոմաս վարդապետը իր ուղարկած սուտ տեղեկութիւններով պատճառ է դարձել նաեւ այլ վաճառականների կործանմանը. այսպէս Ղասսան Աղա էմինի եղբօր՝ Անտոն չէլէպու, որ իր դէմ եղած ամբաստանութիւններից ազատուելու համար 80.000 piestre վճարեց:

Ամէն անգամ որ Վենետիկում հարուստ հայ վաճառական է մահանում, Թոմաս վարդապետը լուրն հաղորդում է Օսմանեան դրանը, տեղեկացնելով, թէ ինչ-

and Lovro Kunčević, Leiden-Boston: Brill, 2013, pp. 223-225).

քան գումար են թողել Պոլսում գտնուող իրենց ազգականներին, որոնք պետութեան կողմից իսկոյն դժուարութիւնների էին մատնուում: Նմանապէս Թոմաս վարդապետը օսմանեան նախարարներին է հաղորդում Վենետիկում բնակուող հայ վաճառականների ունեցած ատելութիւնը օսմանեան պետութեան դէմ, որպէսզի ամէն կերպով ատելի դարձնի (ցոյց տայ) իր ազգը թուրքերի աչքում:

Պոլսում Վենետիկեան պալլի քարտուղար Ballarino-ն մի երկրորդ նամակ էլ է ուղարկում, 1656 թ. փետրուարի 5-ով թուագրուած, ուր համառօտ կերպով գրում է, թէ Ղասսան Աղա էմին իրեն հաղորդել է Թոմաս վարդապետի արարքը, որ է՝ վարդապետի գրած սուտ լուրերի հետեւանքով իր Անտոն չէլէպի եղբայրը բանտարկուել է, իբր գաղտնի թղթակից Վենետիկի հայ վաճառականների: Բանտից ազատուելու համար Անտոնը 80.000 reale-ի չափով վնաս է կրել: Ղասսան Աղան բողոք է ներկայացնում Վենետիկի դեսպանին, խնդրելով որ կրած անարդարութեան լուրը հաղորդուի Վենետիկի ծերակոյտին¹⁰⁸:

Այս բոլորից յետոյ չի ուշանում նաեւ Վենետիկի Ծերակոյտի խիստ եւ արդար որոշում-վճիռը: Թոմաս վարդապետը 1656 թ. ապրիլի 21-ին կանչուում է Սրբաքննութեան ատեան եւ իրեն է հաղորդում վճիռը՝ երեք օրուայ ընթացքում թողնել Վենետիկ քաղաքը, իսկ ութ օրուայ ընթացքում՝ պետութեան սահմանները, առանց վերադառնալու իրաւունքի, զանցառու-

108 Երկու ամսակները տե՛ս Archivio di Stato di Venezia, Senato, Dispacci degli ambasciatori e residenti, Costantinopli, Filze, Pezzo: 139. Երկու ամսակների թուականները Ալիշանը ուղղել է 1656 թ. յունուարի 17 եւ փետրուարի 5, չնայած իր ընթրիմակած թղթերում երկու ամսակներն էլ կրում են 1655 թուականը: Ալիշանն անկասկած հետեւել է դէպքերի տրամաբանական կարգին, ինչ որ բանական է:

թեան պարագայում՝ ծանրագոյն պատիժների սպառնալիքով:

Այս կերպով աւարտում է Թոմաս վարդապետի Վենետիկ քաղաքում ունեցած առաքելութիւնը, որի համար տարիներով թոշակ էր ստանում Հաւատասփիւռի ժողովից:

Թոմաս վարդապետի դարձը Կ.Պոլիս

Թոմաս վարդապետը Վենետիկից վտարուելով ուղղուում է Վիեննա, այնտեղից ճանապարհը շարունակելով հասնում է Պոլիս: Մեր տրամադրութեան տակ ունենք երկու նամակներ, գրուած տարբեր անձերի կողմից սակայն լիովին համաձայնում են իրար հետ: Նամակագիրներից առաջինի հեղինակը նշանաւոր Պօղոս Փիրոմալին է, որ 1657 թ. մարտի 28-ին Պոլսից գրում է Հաւատասփիւռի քարտուղարին: Փիրոմալին տեղեկացնում է. «Վիեննայում երեք ամիս յոգնեցի ազատուելու համար Թոմաս վարդապետից, հայոց սուտ պատրիարքից. յետոյ չցանկացաւ, որ իրեն ընկերանամ մինչեւ Պոլիս, որպէսզի հետը եղած վաճառականներին չյայտնեմ թէ ինքը հռոմէական (իմա՛ կաթողիկէ) է եղել. ինձ խաբեց եւ իր պատճառով 70 օր մնացի սահմանադիտին: Երբ պատահամբ իրար հանդիպեցինք օսմանեան սահմանագլխին, շատ ծանր նախատինքներով ինձ արհամարեց, սպառնալով, թէ պիտի արգելք հանդիսանայ ճանապարհուելուս: Բայց Աստուած ինձ օգնեց: Իր այս խաբէութեան հետեւանքով ընկայ ծանր ծախսերի տակ, ապա թէ ոչ մինչեւ այսօր արդէն հասած կը լինէի իմ տեղս: Աստուած թող ների իրեն, եւ առաջնորդի ճշմարիտ Հաւատքի, որովհետեւ չեմ կարծում թէ կաթողիկէ լինի»¹⁰⁹:

Երկրորդ նամակը կրում է 1657 թ. յուլիսի 14 թուականը, գրուած է Վիեննա-

109 Տե՛ս SOCG, vol. 316, f. 112; Աւա՛տ vol. 222, f. 13:

103 Տե՛ս AP, Lettere volgari, vol. 30, f. 111.
 104 Տե՛ս SOCG, vol. 292, f. 501.
 105 Տե՛ս Acta, vol. 25, f. 4, n. 19.
 106 Տե՛ս AP, Lettere volgari, vol. 31, f. 2.
 107 Իմա՛ Giovanni Batista Ballarino (1603-1666), Վեներիկեան հանրապետութեան դեսպանատան երկարամեայ քարտուղարն եւ փաստացի դեսպանը Կ. Պոլսում Կանդիայի պատերազմի տարիներին: Մահացաւ 1666-ին, Կանդիա այցելելուց յետոյ մակեդոնական ծովափնայ քաղաքներից մէկում (տե՛ս The European Tributary States of the Ottoman Empire in the Sixteenth and Seventeenth Centuries, Edited by Gábor Kármán

յից, Վենետիկի Giovan Battista Nani (1616-1678) դեսպանի կողմից, ուղղուած Վենետիկի դուքսին:



Նանին գրում է, թէ Պոլսից ստացել է դոմինիկեան Պողոս Փիրոմալլիի արքեպիսկոպոսի նամակը, որին յանձնուած է տանել Վենետիկի Հանրապետութեան նամակը Պարսից շահին: Փիրոմալլին գիտենալով, թէ Թոմաս վարդապետը իմանալով, որ իր մօտ կան Պարսից շահին ուղղուած նամակներ Վիեննայի կայսրից, Վենետիկի Հանրապետութիւնից եւ քահանայապետից ու վարենալով, որ թուրքական սահմանագլխին մատնութեամբ բռնուի, նամակները պահուած է գրքերի մէջ, իսկ գրքերը յանձնուած է Բելգրադ գտնուող վաճառականներին, որպէսզի ապահով ճանապարհով հասնեն իր ձեռքը: Այս լուրերը հաղորդելուց յետոյ, Նանին աւելացնում է. «Վարդապետը Վենետիկից վտարուելուց յետոյ շատ վատ տրամադրութեամբ Հասաւ Վիեննա, ասելով թէ իր բանտարկութեան եւ վտարման պատճառը Կ. Պոլսի [վենետիկեան]

տիկեան] դեսպան Բալլարինի նամակներն էին»¹¹⁰:

Վենետիկի դուքսը, 1657 թ. յուլիսի 28-ին պատասխանելով Վիեննայի Նանի դեսպանին, գովում է Փիրոմալլիի զգուշացուցած թոմաս վարդապետից. «որ այստեղ բանտարկուեց եւ վտարուեց իր խոտոր ընթացքի համար» (per suoi tristi pontamenti)¹¹¹:

Այսպիսով աւարտուած են մեր աղբիւրների վկայութիւնները Թովմաս վարդապետի Հոռոմի հետ ունեցած յարաբերութիւնների մասին:

Թոմաս վարդապետը Կ. Պոլսում պատրիարքի վախճանը

Ի տարբերութիւն վերոգրեալի, Թովմաս վարդապետի Կ. Պոլսում անցկացրած հետագայ կեանքը բաւականին ամբողջական կերպով ուսումնասիրուած է հայագիտութեան մէջ, շնորհիւ Հ. Միքայէլ Չամչեանի¹¹² եւ Մաղաքիա արք. Օրմանեանի¹¹³: Կ. Պոլիս հասած եւ մօտ երկու տարի թափուր մնացած պատրիարքական աթոռի համար Թովմա Բերիացու ծաւալած գործունէութեան գլխաւոր աղբիւրը վերոյիշեալ հետազոտողների համար եղել են Երեմիա Քէօմիւրճեանի աշխատութիւնները եւ մի շարք այլ յիշատակագրութիւններ:

Համառօտելով ասենք, որ Թոմաս վարդապետ Բերիացին, Կ. Պոլիս վերադառնալով, դրամի ուժով եւ օսմանեան իշխանութիւնների առջեւ պատրիարքական տուրքը մօտ եռակի բարձրացմանը տուած

110 Archivio di Stato di Venezia, Senato, Dispacci, Dispacci degli ambasciatori e residenti, Germania, Filze, Pezzo: 109, f. 335rv. Երախտապարտ ենք Սարգիս Բաղդասարեանին այս փաստաթղթի թուային որակեալ պատկերի համար:
111 Archivio di Stato di Venezia, Senato, Corti, vol. 34.
112 Տե՛ս Հ. Միքայէլ Չամչեանց, Պատմութիւն Հայոց, հտ. Գ, Վենետիկ, 1786, էջ 671-679:
113 Տե՛ս Մաղաքիա Օրմանեան, Ազգայատում, հտ. Բ, §§ 1729-1738, էջ 2919-2935:

Համաձայնութեամբ, նոյն իշխանութիւնների օգնութեամբ ու հրամանով յաջողում է արդէն 1658 թ. մայիսի վերջին տիրանալ պատրիարքական աթոռին, որ մօտ երկու տարի թափուր էր¹¹⁴:

Ամենեւին նպատակ չունենալով խորանալու մանրամասնութիւնների մէջ, փորձենք ուրուագծել դէպքերի հետագայ ընթացքն ու վախճանը Երեմիա Քէօմիւրճեանի նկարագրմամբ¹¹⁵:

Այսպէս, Թովմայի որդեգրած գիծն ու արած քայլերը կտրուկ արագացրին իր հանդէպ քաղաքում եղած հոգեւոր ու աշխարհիկ ընդդիմադիր ուժերի լիակատար համախմբումն ու անհնազանդութեան գործնական քայլերը:

Ըստ Երեմիայի գումարուեցին «ժողով եւ սինհոդոս իշխանացն քաղաքիս» «թէ զի՞ գտցեն բանալիս նաեւ պատճառս ի վերայ Թովմային, զի կաղացուցեն ասորմամբ եւ կամ սպանմամբ»: Ժողովների արդիւնքում ուրուագծուեցին հետեւեալ մեղադրանքները՝

- ա) «ազգս մեր զոչ եղեալն արար, որ գհարկն յաւելցոյց»,
- բ) «զեկեղեցոյ իրաւունքն եւս յափշտակեաց ընդ աթոռոյն»,
- գ) «գճրուաղեմ ի պէրաթ գրեաց, հարկատու առնէ զնա»:

Վերջ ի վերջոյ հրապարակ նետուեց զլիաւոր ու մահացու մեղադրանք-ամբաստանութիւնը՝ «եթէ ֆռանկ է նա եւ շաշուտ՝ այսինքն լրտես նոցայ»¹¹⁶: Վկա-

114 Տե՛ս Նոյն տեղում, § 1729, 1731, էջ 2919-2924:
115 Ծարադրուած է ըստ Երեմիա չէլէպի Քէօմիւրճեան, Օրագրութիւն, հրատարակեց Մարոպ արքեպ. Նշանեան, Երուսաղէմ, 1939, էջ 276-292: Հմմտ. նաեւ Երեմիա չէլէպի Քէօմիւրճեան, Տարեգրական պատմութիւն - (տե՛ս Ս. Ղազարի մատենադարան, ձեռ. թիւ 476, թթ. 138ա-143բ):
116 Երեմիայի Օրագրութիւնից քիչ տարբեր է «Տարեգրական պատմութեան» համապատասխան հատուածը. «եւ գտին զայս հմար թէ չէ հայ, այլ ֆռանկ. նաեւ լրտես ֆռանկաց եւ տարան ի տիր-

յութիւն տուեցին մի քանի «Արեւելցի» վաճառականներ, ապա «հօճէթ արարին եւ եղին ի բանտս մահապարտացն (3 յուլիս, շաբաթ)»:

Որոշումը կայացուած էր. «Համայն քահանայք եւ աթոռակալք եւ երեսփոխանք եւ իշխանք վեց եկեղեցոյ քաղաքիս ի մի վայր ժողովեալ, ուխտ եւ դաշինս արարեալ, հոգով եւ մարմնով կանգնեալ վասն Թովմայ հերձուածողի, զի զչարութիւն նորին ի կառափ նորա հարկանիցեմք, եւ թէ՛ ըստ այսմ որքան ըստակ երթայ, թէ՛ շատ թէ՛ քիչ, եւ մեք վերոյ գրեալքս քէֆիլ եւ երաշխաւոր եմք»¹¹⁷:

29 օր բանտարկուած Թովմայի նկատմամբ դատավճիռն ի կատար է ածուած կաշառուած թուրքական պաշտօնեանների ձեռքով. «Նաեւ սուպաշոյն կաշառս, զի ի մէջ գրոյն մահադեղ խառնեալ ընդ դահվէի արբոյց նմա սուպաշին ի գիշերի»:

Համաձայն Երեմիայի, առաւօտեան մեծ դատին կաշառքով «Հաստատեց» ոչ բռնի մահուան փաստը եւ «ձգեալ արտաքս զմարմին նորա, ոչ ոք թողին մերձենալ ի նայ, ոչ թէ կարգաւորապէս թաղել՝ այլ եւ ըստ օրինի. զի մնայր յաւուրն Բ[2]չ[աբթ]ի (2 օգ[ո]ստ[ոս]) այնպէս ի գետնի, արկեալ ի վերայ նորա կտոր մի խորի», ապա «խրատեալ զբանդապետսն զի ի ծով արկցեն, որ եւ արարինն. զի առ

ւան եւ կացուցին վկայս արեւելցի Սուլթանշա[ն] եւ Մկրտիչ եւ Արիսոյս ամուսնք, որք կացին յատինք թէ սա ի Վեճեփիկ զպահս մեր ոչ պահեր, զձեւ եւ զգետ ֆռանկաց ստացեալ անդ բնակեր» (տե՛ս Երեմիա Քէօմիւրճեան, Տարեգրական պատմութիւն, - Ս. Ղազարի մատենադարան, ձեռ. թիւ 476, թթ. 139ա):

117 Չպէտք է մտածել, թէ Պոլսում Թովմա Բերիացուն կատարեալապէս անապահով գործում չկային ընդդիմացողներ: Նոյն Երեմիայի հարորումք «վեց եկեղեցոյ միասիւրք կնիքն ի անկատ թղթի» տակ «որ ոչն մօհրեր՝ ի բաց վարեին անպատասխան. եւ անպատասխան ոչն հնազանդեին, անարգեալ զնա՝ զայլ ոչն անդէն ի հանդէս անպարտեց հաստատեին»:

երես ծովուն ի վերայ երեսացն թաւալէր, որում սակի խայտառակ եղաք զրացեաց եւ ծաղր թշնամեաց այլասեռից՝ յաւուրսն յայնոսիկ»։ Այսպիսով «խայտառակ եղաք զրացեաց եւ ծաղր թշնամեաց այլասեռից՝ յաւուրսն յայնոսիկ»։

Երեմիան, յիշեցնելով սուրբգրային պատուիրանները («Ձայր արիւնառեղ պիղծ առնեմ» (Առակ Ե 7), «Որ հեղու գարիւն մարդոյ՝ փոխանակ եւ հեղու արիւն անոռա (Մն. Թ 6), Մի՛ սպանաներ (Ելից Ի 13)) միաժամանակ ցուցում է այն բոլոր հոռի բարքերը, որ իշխում էր մայրաքաղաքի հայկական համայնքում.

«... ոմանք ոմանք աշխարհականք՝ լիբբք եւ անամօթք, փարիսեցոց նման եւ դպրաց՝ իշխեալ ի վերայ կարգաւորաց», «զանարգանս եւ զհայհոյութիւնս զէն եւ սուսեր ընդ իւրեանս», «ապականեալ եւ քայքայեալ զաւանդ հարց եւ զդաշինս հարց սրբոց», «ոչ գիտէին բնաւ զպահս, ձէթ եւ գինի անխտիր, ի գինեվաճառս կային, որ իւրեանց տուն էր պաշտման», «կոյս ընդ այրոյ պսակէին. եւ այլք բերեալ կանոնս յատենի դնէին», «հասի եւ չհասի եւ մեղօք լինելոյ՝ անթիւ», «այլ եւ ի կաշառակութիւն մոլեալք իբր զհեթանոսս», «զայսքան ժամանակի եղեալ զեկեղեցոյ եւ զաթոռի իրաւունքն եւ զհասկն, որ աւանդեալ ի նախնեաց յառաջագոյն եկելոց աստ ի քաղաքս՝ առ ի պէտս աղքատաց, հիւանդաց եւ բանտարգելոց. ... ի ձեռն անոպայից փառամոլ եւ յանդուգն արանց՝ քայքայեալ եղեւ», «զտունս եկեղեցոյ որպէս պարիսպ ի միջի առեալ էին բոլորապատ շրջակայիւք՝ արարեալ յիշատակ նոցունց, զամենայն ծախեցին, յաւել եւ զայն եւս այլազգեաց», «խաչ եւ սկիհք եւ շուրջառք եւ ամենայն զարդ եւ անօթ սպասուց սրբութեան՝ ամենայն պականեալ ի սոցա ժամանակս», «զխաչս եւ զկանթեղս զարծաթեղէնս եւ զոսկեղէնս ի հալոց տուեալ՝ աչօք տեսա-

նէաք», «զանօթսն զրաւ անունով տարեալ առ իւրեանս բաժին առնէին, թէ՛ խաչ եւ թէ՛ սկիհ ի տունս իւրեանց արգելուին, ծախէին եւ ի հալոց տային», «ի ձեռս բռնաւորացն բազում անգամ զեկեղեցին կնքել տային եւ մնայր աւուրբք փակեալ, եւ անմեղ քրիստոնեայք եկեալ յաղօթս որ տեսանէին զայն, բախէին զկուրծս եւ դառնային: Եւ զհասս եկեղեցոյն՝ խնկին եւ մոմին, մահուան եւ կենաց. կեղեքէին զանմեղ քրիստոնեայս եւ ի պիղծ սէրս իւրեանց, ի զբօսանս եւ ի գինէտունս ուտելով մսխէին եւ զուարճանային այնու զրամով», «Քո ուտելն հերիք է եւ բաւ, ես եղեց աթոռակալ եւ երեսփոխան», «եկք արծաթի եւ ողորմութեան ամենայն ընդունայն մսխեալ», «անծոմ էին յաւագ պահս. յառաւօտէ սկսէին զթուրթունս եւ զղահվէն, զայն եւ ի խուցս յեկեղեցոյն. եւ յաղօթս բնաւ ոչ գնային» եւ այլն:

Ծանր են հնչում Երեմիայի մեղադրանքները ուղղուած Կ.Պոլսի հոգեւոր եւ աշխարհիկ աւագանուն.

«Ո՛վ մեծի յիմարութեանս՝ ասեմ այնոցիկ, ո՛վ մեծի մոլութեան, եթէ հերձուածող զոր ասացիք նզովս՝ չէր մեծ քան զԱրիոս եւ զՆեստոր եւ զայլսն, որոց եղեւ վրէժխնդիր Աստուած. դուք ընդէ՞ր արենատէր եւ մարդասպան եղէք ամենայն քաղաքս վասն նորա: Եթէ չար էր՝ վասն է՞ր ոչ շահեցայք զնա յառաջադէմ գալստեան նորա, եւ թէ վատ էր, որ ոչ ընդունեցայք եւ ոչ թողիք յեկեղեցիսդ, վասն որոյ եւ ել գնաց, ընդէ՞ր եւ ապա ուր որ գնաց ոչ թողիք մտանել ի բոլոր գիւղսդ եւ ի քաղաքդ. թուղթս ի վերայ թղթից թէ մի՛ ընդունիք: Զի՞նչ առնէր եղկելին. կամէին սոքա թէ տաճկանայր՝ ուրանալով զհաւատն. բայց նա մնայր զաւուրս Իթ [29] անայցելու, մինչեւ սպանին եւ հասին ըզձանաց իւրեանց եւ զի առին եւս վրէժ ի նմանէ. եւ նորայն դատաստան

առ Տէր մնաց, գոնէ թողութիւն մեղացն գտանելով»¹¹⁸:

Նոր պատրիարքական ընտրութիւնները Կ.Պոլսում տեղի ունեցան մօտ մէկ տարի յետոյ, 1659 թ. մայիսին, եւ պատրիարք ընտրուեց Մարտիրոս Ղրիմեցին¹¹⁹:

ՅԱԻԵԼՈՒԱԾ
Թովմաս վարդապետի Ամամկը
Հաւատաստիւոի ժողովի կարդիմալմե-
րիմ
1643 թ., Փետրուար 12¹²⁰

[Շ]նորհօք ամենագօր պետականին շնորհագարդեալք եւ նորին ձեռնատվութեամբն բարգաւաճեալք՝ ընդ ամենայն տեղիս հոշակաւորեալք եւ ամենայն քրիստոնէիցն վե՛հ երեւեալք բանիս փրկութեան ճոխացեալք. գործով արդիւնաւորեալք:

Ով ընտրեալքդ յԱստուծոյ եւ մեծարեալքդ ի հոյս քրիստոնէից, բարունք բարիք եւ խոհմք խորին խորհրդոց դիտապետք, քարոզողք կենացն բանի գեղեցկագնացք համբաւօք, աւետարանիչքդ Սիոնի պատմողք անհասից եւ յայտնողք անգիտիցն՝ զի դուք որդւոց մարդկան նստելոցն ի խաւարի էք ջահ անշիջանելի եւ լոյս իմանալի, դեղ էք աշխարհիս փրկական ամենայն հոգւոց վիրաւորելոց եւ աղ երկնային իմաստութեան, որք անապական պահէք զուղափառութիւն եկեղեցւոյ սրբոյ:

118 Երեմիա չէլէպի Քէօմիւրճեան, Օրագրութիւն, Ռատարակեց Մետրոպ արքեպս. Նշանեան, Երուսաղէմ, 1939, էջ 276-292: Հմմտ. Երեմիա չէլէպի Քէօմիւրճեան, Տարեգրական պատմութիւն - (տե՛ս Ս. Ղազարի մատենադարան, ձեռ. թիւ 476, թթ. 138ա-143բ):

119 Հասկանալի պատճառներով Թովմա Բերիացու անունը բացակայում է Կ.Պոլսի հալոց պատրիարքների տապանագրերի ցուցակում (տե՛ս Վահրամ Յ. Թորգոմեան, Կ.Պոլսոյ հայ պատրիարքներու տապանագրերը, - «Բազմավէպ», 1918, էջ 169-186):

120 Բնագիրը տե՛ս AP, SOCG, vol. 168, f. 325: Կղեմէս Գալանոսի կատարած լատիներէն թարգմանութիւնը տե՛ս Առյւ տեղում, է. 334:

Սիւնք՝ անդրդվելիք հաստատեալք ի տեսունէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որոյ դրունք դժոխոց ոչ ունին իշխանութիւն յախթահարելոյ եւ իսկապէս կոչմամբ վերին դիւմանցն ազդիւք կարգեալք փեսայք ամենայն եկեղեցեացն Քրիստոսի, եպիսկոպոսի հոգւոյն մերոյ, ուղղիչ մոլորելոց, այսինքն հերձուածոց զաց եւ պարծանք ամենայն հաւատացեալ քրիստոնէից, գերաբարձր պարունք եւ տէր կարդինալք միագումար դասք սրբազան ժողովոյդ մեծին Հոռմայ, որ լուաք թէ հրամանաւ Ուրպանոսի սուրբ հայրապետին ընթանուր տիեզերաց հաստատեցաւ առ ի միաբանութիւն հաւատոյ յամենայն աշխարհիս:

Ես նուաստ ծառա Յիսուսի Քրիստոսի տէր Թովմաս արեղայ եւ աստուածային բանի սպասաւոր, յոյժ սիրով խոնարհեալ ողջոյն մատուցանեմ ձեր վեհանձնութեանցդ եւ ծանուցանեմ գերբարձր տէրութեանց ձերոց զիղձ եւ զփափաքս զոր ունիմ յարակցութեան սուրբ ոտից ձերոց եւ միաբանութեան ընդ Հոռմէական ուղղափառ հաւատոյ, որպէս եւ միաբանեալք էին առաջինք հայրապետք մեր, վասն այսորիկ ընդունեցի եւ ձեռնագրութեամբս իմով գրեցի եւ կնքեցի զդաւանութիւն ուղարկեալ մեզ սուրբ ժողովոյդ եւ ձեռնագրութիւնն այն յղեցի ձեզ նշան տարփանց սրտից իմոց, որով օրըստօրէ ցանկամ հաղորդիլ սուրբ աշխատութեանցն առաքելական պաշտօնէիցն այդ սուրբ հանդիսոյդ եւ այսուհետեւ բազում ջանիւ վաստակել ի քարոզութիւն ուղղափառութեանն եւ առնուլ զլուծ տեսուն մերոյ Յիսուսի Քրիստոսի ներքոյ հրամանաց ձերոց, ոչ իբրեւ զօտար, այլ իբրեւ զմի ի ձէնջ առաքեալ քարոզողացն. վասն որոյ գամ այս նամակովս եւ անկեալ առ սուրբ գարշապարն մեծ հայրապետին Ուրպանոսի սուրբ փափին, ջերմեռանդ սրտիւ եւ արտասովթոր աչօք աղաչեմ, զի արժանաւորեսցի ուղարկել ինձ ընդ իւր լիալիր օրհնութեամբն զիշխանութիւն այնպիսի արարողութեանն. եւ թէպէտ ցանկացայ եւ աշխատեցայ լինել պատրիարք այս քաղաքիս Ստամպոլսի ի տեղի տեսուն իմոյ Կիրակոսի, զի մեծագոյն իշխանութեամբ կարող լինէի լցուցանել զիղձ իմ եւ օգուտ լինել

կուրացեալ մեր ազգիս, սակայն մինչեւ ցայժմ ոչ աջողեցաւ գործս այս ի տեսնել եւ յուսամք ի տէր զի կատարեսցի ձեր սուրբ աղօթիւք:

Իսկ արդ թէ այսպէս, թէ այնպէս, որպէս եւ իցէ, ահայ յայժուս ի վեր ի կիր արկի զառաքելական սպասաւորութիւնն, օգնական լծորդութեամբ եղբոր իմոյ սիրելոյ ի տէր եւ վարժապետին մերոյ պատուական պատրի ի կարգէ թէատինոսաց Կղեմէս վարդապետին. կրկին առաքեալ եւ ուղղիչ ազգիս մերոյ ի ռահն ճշմարիտ ըստ գնացից նախնոյն մերոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, ոչ բանիւ միայն այլ եւ գործով, որ սերմանեաց ի սիրտս մեր զսերմն բարի եւ սազում աշխատութեամբ յանգ եհան զքերականութիւն, զլօճիգայ եւ զայլ գործառնութիւնս աստուածաբանութեան, զոր եւ սովորեցոյց մեզ, քանզի զիդձ մեր եւ զտենչումն զոր ունէաք սակս սորա, շեմք բաւական զի մելանաւ ի քարտիսի գծագրել Կ [60] լեզուաւ վիպասանել, բայց տէրնն զիտէ զոր գաղտնեաց է քննող. թէ որչափ պարծանք եղեւ ազգիս, զի թէպէտ ի տեսլինէ ծածկեալ էաք ըստ երգոյն, այժմ աչք մեր ըսնաւորք ():

Դարձեալ լուաք սիրելիք զի նոր ձեր հրամանաւն կամի հրաժարիլ ի մէջ այս պատուական պատրիս, որ եթէ այդպէս առնէ որպէս եւ հրամայեալ էք, լինի մեզ վերջին շարն առաւել քան զառաջին. վասնորոյ է լսելն մեր զայդպիսի պատճառ, յոյժ լցաք տրտմութեամբ եւ սգով մեծաւ եւ տեղի առաք զալ այս նամակովս այդր աղաղակելով եւ հայցելով զպատճառ

այդպիսի վնասի: Քանզի այդպէս առնելով, ով հայրք սուրբ, ոչ է զմիութիւն եկեղեցւոյ շինել եւ զխաղաղութիւն քրիստոնէից, այլ եւս առաւելաբար պատառել զնա եւ խափանել, զի որժամ մեք ի յայսմ տրտմական եգիպտոսի վշտաթաւալ եւ եռաթշուառ գերութեամբ տառապեալք զհետ ընթանամք արտասուաթոր աչօք զկնի եղբայրութեանդ ձերում, իբր հիւանդ առ բժիշկ եւ անառակ որդի առ հայր ապաւինելով ձեր օգնութիւնն, յայնժամ դուք զմտաւ ածէք, ոչ թէ սիրով եւ բժշկութեամբ պարատիլ զցաւ վիրացս կամ ուսուցանել զանգիտութիւնս մեր եւ կանգնել զգլորեալ եղբարսն, այլ հրաժարիլ եւ խոտորիլ ի մէջ եւ շանայք բառնալ ի միջի մրում զայս սիրելի պատրիս, որ բազկատարած աղօթիւք եւ բազմայգբաղ աշխատանօք ի մէջ եմուտ երկուց ազգացս միջնորդ խաղաղութեան եւ սիրոյ առ ի յառնել զերկուսեանս մի. զի եղիցի մի հօտ միոյ հուվին: Վասն որոյ ես յիմ կողմանէ եւ ի կողմանէ ամենայն ազգիս մերոյ աղաջեմ զբարձրութիւնդ ձեր շնորհօք վերամբարձեալ յաղագս Քրիստոսի խաչելոյն, զի մի յաւելցուցէք զտառապանս ի վերայ տառապանաց իմոց եւ մի բաժանէք զայս պատրիս ի մէջ. ողջ լերուք ի տէր:

Գրեցաւ ի քաղաքն Կոստանդինուպօլիս, ի թվ. Հայոց հազար իննըսուն եւ երկու [1092-551=1643], փետրվար ամսոյ Ժ [10] եւ Բ [2]:

[Կնքադրոշմ] Աստուծոյ ծառայ Թումայ վարդապետ

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԳ ԴԱԻԻԹ ԲԵՐԻԱՑԻ (-1679)

Դաւիթ Բերիացու մասին Հաղորդելու ենք կենսագրական մանրամասնութիւններ, որ Հանդիպեցինք Հաւատասփիւռի դիւանում: Իր մասին վերջին անգամ, անդրադարձել էին Արտ. Սիւրմէեանը եւ Բաբկէն Կիւլեսէրեանը¹²¹, իրենցից առաջ եղած աղբիւրների տեղեկութիւնները Հրաշալի Համադրելով:

Կ. Պոլսի պատրիարք

Երբ Կղեմէս Գալանոսը Պոլիս Հասաւ, 1641 թ. ապրիլի 12-ին, պատրիարքն էր Կիրակոս Երեւանցին: Կիրակոսը Երեւանում աշակերտել էր Փիրոմալլիին եւ յարել էր կաթողիկէ վարդապետութեանը, այդ իսկ պատճառով Հալաձուել էր Փիլիպպոս կաթողիկոսի եւ Էջմիածնի վարդապետների կողմից: Կիրակոսը փախչելով Հաստատուեց Պոլսում եւ իր քարոզներով ու վարուելակերպով սիրաշահեց ժողովրդի Համակրանքը: Այս մանրամասնութիւնները Հաւատասփիւռին Հաղորդողը Պոլսի Ֆրանսիական դեսպանն է իր 1642 թ. յունուար 18-ի նամակով, ու դեռ շարունակում է պատմել, թէ Դաւիթ պատրիարքը չկարողանալով Հանդուրժել Կիրակոսի յաջողութիւնը, միացած Էջմիածնի կղերական Համախոհներին, 1640 թ. Հոկտեմբերի դումարուած մի Հաւաքի ժամանակ բանադրում է Կիրակոս վարդապետին, փորձելով նոյնիսկ սպանել նրան: Կիրակոսն ապաստանում է մի թուրքի տանը, ուր մնում է մի քանի շաբաթ, մինչեւ որ նրա

Համակիրները թուրքին 30.000 piastre տալով Դաւիթին զրկեցին պատրիարքական աթոռից, ամբաստանելով, թէ ուզում է Հայերին ենթարկել Երեւանի կաթողիկոսին, որն իր կարգին ենթակայ է պարսիկներին: 1641 թ. փետրուարի 2-ին, Կիրակոս վարդապետը գրաւում է պատրիարքական աթոռը: Նոյն դեսպանը գրում է. «Դաւիթն ամէն միջոց գործադրեց վերահաստատուելու Համար. թուրքերի որոշմամբ նրան Հրահանգ տրուեց իրեն մահուան սպառնալիքի տակ լքելու թուրքական սահմանները: Դաւիթն իսկոյն Հնազանդուեց: Կիրակոսը իշխանութիւն ունենալով Պոլսից վտարել տուեց բոլոր այն Հոգեւորականներին, որ իրեն Հակառակ էին: Այս գործում նրան օգնեց Դիարբեքլիի Յովհաննէս արքեպիսկոպոսը, որ Դաւիթ մեծագոյն թշնամին էր»¹²²:

Նոյն այս դէպքերն է նկարագրում նաեւ Կղեմէս Գալանոսը, Ֆրանսիական դեսպանի գրելուց առաջ: Պատմելով իր Պոլիս Հասնելը, նկատում է, որ Պոլսում անուանի էր Սիմոն վրդ. Ջուղայեցին, Դաւիթ պատրիարքի Համախոհը: Իր աշակերտներից քաջալերուած, Սիմոն վարդապետը Ղալաթիայի Հայոց եկեղեցում ուզել է վիճել Գալանոսի Հետ, Քրիստոսի երկու բնութիւնների մասին ու Գալանոսը գրում է, թէ երբ «Կիրակոսը 30.000 պիաստր տալով թուրքերին, նստեց պատրիարքական աթոռին զահրնկեց անելով Դաւիթն եւ վերջինիս բարեկամ Սիմոն վարդապետին, Կիրակոսը միացած Յովհաննէս արքեպիսկոպոսի Հետ՝ Պոլսից վտարեց Դաւիթն, Սիմոն վարդապետին եւ շատ ուրիշները»¹²³:

121 Բաբկէն Ա. աթոռակից կաթողիկոս, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441էն մինչեւ մեր օրերը), երկրորդ հրատարակութիւն, Անթիլիա-Լիբանան, 1990, էջ 375-397: Արտատաղ արքեպս. Սիրմէեան, Պատմութիւն Հալէպի հայոց, երրորդ հատոր (քննական), 1355-1808, Փարիզ, 1950, էջ 471-476:

122 Տե՛ս SOCG, vol. 167, f. 169-170.
123 Նոյն տեղում, f. 165+174.